№ 135 ԿԻՐԱԿԻ, 19 ՅՈՒՆԻՍԻ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 1916 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀՈՐԻԶՈՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ԿԻՐԱԿԻ, 19 ՅՈՒՆԻՍԻ №135

ԹԻՖԼԻՍԵՑՈՑՆ ՀԱՄԱՐ

Տարեկան	10 ռուբ.
Կէս տարին	6 ռուբ.
Ամսական	1 ռուբ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	12 ռուբ.
Կէս տարին	7 ռուբ.

Բաժանորդագրութիւնը ընդունւում է իւրաքանչիւր ամսի սկզբից, և պէտք վերջանայ անպատճառ յետագայ որևէ ամսի վերջին։

Յունիսի մէկից մինչև տարւայ վերջը արժէ 7 ռուբլի։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐ. և ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹ. ՉԷ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 20 ԿՈՊԷԿ (կարելի է և նամականիշով) և հին հասցէն, տանից որի գծումները կը թողն ԱՆՀԵՏԱՑՈՒՄ.

ԱՌԱՆՁԻՆ №-Ը ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ.—1-ին երեսի վրայ տողին (պետիտ) 15 կոպ., Կովկասից դուրս՝ 20 կոպ., 4-րդ երես 10 կոպ., Կովկասից դուրս՝ 15 կոպ.։

ԱՊԱՌԻԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՉԵՆ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ

Խմբագրութիւնը բաց է 8—2 ժամ., գրասենեակը 9—3 ժ. ցերեկ. և 6—8 ժ. երեկ.։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԽՄԲԱԳՐԻ ՄՕՏ՝ ժ. 2-ից մինչև 3-ը։

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція Газеты „Оризонъ". Сололакская ул., № 6, кв. 1, Телеф. № 15—57.
[illegible] Tiflis (Russie, Caucase), Rédaction „Horizo"

ՕՐՈՒԱՅ ԿԱՐԵՒՈՐ ԱՆՑՔԵՐԸ

Ռուսաց արևմտեան ճակատի հարաւային մասում ռուսները հետապնդում են նահանջ տւող թշնամուն։ Վերցւած է Կոլոմեա քաղաքը, Բուքովինայի երկաթուղիների կարևորագոյն հանգոյցը։ Գերիների ընդհանուր թիւը հասել է 212,000-ի։ Ճակատի հիւսիսային մասում գերմանացիներին աջողւել է անցնել Նեման գետից և տիրել մի անտառակի։

Կովկասեան ճակատում թիւրքերը Գիւմիւշխանէի ուղղութեամբ անցել են ռուսների թիկունքը, բայց յետոյ ռուսները յետ են շպրտել նրանց և առաջ անցել։

Վերդենի մօտ կռիւները շարունակւում են։

Իտալական ճակատում իտալացիները շարունակում են յաղթական առաջխաղացումը, վերցնելով հարիւրաւոր գերիներ և աւարներ։

Անգլիական դատարանը Իրլանդիայի ապստամբութեան պարագլուխ Ռոջեր Կեզմենտին դատապարտել է մահապատժի։

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

(Մահւան 5-րդ տարելիցի առթիւ)

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ Ղ. ԱՂԱՅԵԱՆԸ

Լրացաւ հինգ տարին։ Հինգ տարի առաջ՝ մին էլ էսօրւան օրը՝ մեր Ղազարը մեռաւ։ Ի՜նչքան տխուր է հընչում թէ՝ Ղազարը, կամ ընդհանուրին հասկանալի ձեւով ասենք՝ Ղազարոս Աղայեանը մեռաւ, և ինչ զւարթ տըրամադրութիւն է առաջ գալիս, երբ մտածում ես՝ թէ՝ նա կար։ Բայց էսօր ես չեմ խօսելու նրա անհատական կամ գրական, հասարակական արժանիքի ու նշանակութեան մասին։ Լաւ կը լինի էդ մասին մտածէին մեր տաղանդաւոր դասախօսները և գոնէ աչնանը կարողանային գլուխ բերել էն գեղեցիկ գրական երեկոյթը, որ Գրողների Ընկերութիւնը որոշել է նւիրել նրան և ետ է ընկել ձախորդ պայմանների պատճառով։ Էդ երեկոյթի հետ միասին կապւած են և նրա երկերի լիակատար ժողովածուի հրատարակութիւնն ու նրա մահարձանի խնդիրը։ Էսօր, երբ հրապարակի վրայ է հայոց գրականութեան ազգային պաշտպանութեան խնդիրը, ես ուզում եմ առաջ բերել նրա կարծիքը էդ մասին։ Էս կարծիքը ես հանում եմ մի տետրակից, որ մահւան նախընթաց օրերում նա յանձնել է ինձ մի շարք ուրիշ թղթերի ու նամակների հետ։ Ամբողջ տետրակը մի յօդւածի սեւագրութիւն է, վերնագիրը «Տարրական ճշմարտութիւններ»։ Ինչպէս երեւում է՝ յոյս չունենալով թէ մեր թերթերում կարող է յօդւածն անցկացնել՝ մտադիր է եղել առանձին բրոշիւրով հրատարակելու։

Ասում է. «Չուզենալով ոչ ոքի դէմ քանակռիւ սկսել, մի քանի տողով ուզում եմ մի քանի տարրական ճըշմարտութիւն յայտնել, ճշմարտութիւն, որ շատ է ոտնատակ տրւում ամեն տեղ և ամեն ժամանակ։

Խնդիրը գրողների մասին է, թէ պէտք է արդեօք, որ նրանք նիւթապէս ապահով լինին, թէ ոչ։

Մտաւոր և բարոյական զարգացումը՝ ամեն ազգի ու անհատի վերաբերութեամբ՝ նիւթական ապահովութեան արդիւնք է։ Տնտեսապէս աղքատ մի ժողովուրդ կարող չէ ոչ մտաւոր և ոչ բարոյական բարձր զարգացում ունենալ։ Ով որ ստիպւած է իր օրական ապրուստի համար առաւօտից մինչև երեկոյ եզան պէս աշխատելու, նրա համար կարող չէ գոյութիւն ունենալ ոչ գիր և ոչ գրականութիւն։ Այս է պատճառը, որ զարգանում է ժողովրդի այն դասակարգը, որի համար ուրիշներն են աշխատում։ Այս է պատճառը, որ սկզբումը գիրն ու գրականութիւնը երկար դարերով ամփոփւած են եղել մենաստաններում ու վանքերում։ Այս է պատճառը, որ սկզբում, ու հենց մեր օրերում էլ, բարձրագոյն ուսում ստանում են միայն արտօնւած դասակարգի զաւակները։ Այս հանգամանքն անվայել է բանական արարածին, բայց էւոլիւցիայի օրէնքով աշխարհս դեռ ևս այս դժբախտ հանգամանքի ստորւն է։

Այս միեւնոյն օրէնքով ժողովրդի լուսաւորութեան ղեկը երկրի իշխողների ձեռքին է լինում, որ ասել է հոգևոր ու մարմնաւոր կառավարութեան, որով երկրի լուսաւորելու չափն ու յատկութիւնը կախւած է լինում այդ կառավարութիւնների ձեռից ու յատկութիւնից։ Մուսուլմանական աշխարհը այլ կերպ է տանում լուսաւորութեան գործը, քրիստոնէական աշխարհը՝ այլ. տարբերութիւն կայ այդ կողմանէ նաև կաթոլիկ ու բողոքական աշխարհներում, սահմանադրական ու միապետական աշխարհներում. բայց ամեն տեղ և ամեն ժամանակ ուսումն ու գրականութիւնը գտնւում է իշխողների խնամակալութեան տակ։

Ապա օրինակներ բերելով թէ ինչպէս Ռուսաստանում Պետրոս Մեծն է դրել աշխարհիկ գրականութեան ու լուսաւորութեան հիմքը, յիշատակելով Նապոլեոն ու էս կողմից գովելով յունական ազգն ու նրա հայրենասիրութիւնը, թէ ինչպէս են պաշտպանում իրենց ազգային գրականութիւնն ու կուլտուրան՝ անցնում է մեզ ու շարունակում է.

«Գրականութիւն ունենալու համար հարկաւոր են գրականագէտներ։ Արդեօք ունենք մենք իսկական գրականագէտներ, այն նշանակութեամբ, ինչպէս այդ բանը հասկացւում է ամեն մի լուսաւորեալ երկրում, ուր կան համալսարաններ, ակադեմիաներ և զանազան ուսումնական ընկերութիւններ։ Սրա պատասխանն է մի խոշոր բացասական ՈՉ։

Մեր մէջ կան, այո, գրողներ, գրելու շնորհք ունեցողներ, ինչպէս և դերասաններ, բայց ինչ աստիճանի որ է մեր թատրոնն ու թատերգութիւնը, նոյնն են և մեր գրողներն ու գրականութիւնը։

Այսպէս պէտք է լինի ներդաշնակութեան օրէնքով։ Անհատի աճելութիւնը բոլոր անդամների մէջ հաւասարապէս է կատարւում, նոյնն է և հասարակութեան աճելութիւնը և զարգացումը։ Եկեղեցի, ուսումնարան, թատրոն, գրականութիւն, ընկերութիւններ, բարեգործութիւն, և այլն, բնականապէս պէտք է իրար համապատասխան լինեն լաւ զարգացման, ու հենց այդպէս է մեր մէջ ամեն ինչ, որ ընդհանուր ազգային է, որովհետև մէկը միւսից կախումն ունի, ամենի մէջ սերտ կապակցութիւն կայ»։

(Կը շարունակւի)

Յովհ. Թումանեան

Ղ. ԱՂԱՅԵԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

ԻՆՉ ՈՐ ՊԷՏՔ Է ԹԱՔՑՆԵԼ ՄԱՐԴՈՒՑ, ՆԱՐԵԼԻ Է ՉԹԱՔՑՆԵԼ ԹՂԹԻՑ ԵՒ ԴՐՈՇՄԵԼ ՆՐԱ ՎՐԱՑ ՄԵՐ ՀՈԳՈՒ ՄԷՋ ՊՏՏԻՈՂ ԲՈԼՈՐ ԱՆՑ ՈՒ ԴԱՐՁԸ *)

Ամառն էր և այն էլ ամենաշոգ ամառներից մէկը։ Ընտանիքս ուղարկել էի Մանգլիս ամառանոց, իսկ ինքս տապակւում էի Թիֆլիսի շոգերում մի դասագիրք տպագրելու առիթով։ Գիրքս վերջացրի, շտապեցի դէպի Մանգլիս։ Հենց տեղ հասնելուս միւս օրը ուզեցի չափչըփել Մանգլիսի փողոցները նրա տեղագրութեան հետ մօտիկից ծանօթանալու համար։ Գործըս սկսեցի մեր փողոցից, որ կոչւում էր Պեսարեսկի։ Մեր բնակարանը գտնւում էր եղևնուտի ուղիղ դիմացը։ Այդտեղից սկսեցի բարձրանալ դէպի վեր և հասայ մինչև իշխան Բարաթովի տունը, որ բաւական մեծ տեղ է բռնում իր ընդարձակ ցանկապատով։ Տեսայ, որ այնտեղ քանքան էին շինւում վերևից սկսած։ Դուռը բաց էր։ Ներս մտայ և սկսեցի նայել հորերի խորութեանը։ Տեսայ, որ այդ հորերից ջուրը երկրի մակերևութին հասցնելու համար դեռ շատ հորեր պիտի փորեն։ Դուրս եկայ այդտեղից և շարունակեցի քայլել նոյն փողոցով, որ ինձ տարաւ մտցրեց մի մեծ շէնքի բակ, որի աջ կողմումը կար մի ընդարձակ սեղանատուն։ Հարցրի դրսի մարդկանց, թէ սա ինչ սեղանատուն է, պատասխանեցին, թէ սա կադետների ամարանոցն է. այս սեղանատունն էլ նրանց ճաշարանն է։ Այդ մարդիկը ցոյց տւին ինձ նաև, թէ որտեղից կարող եմ դուրս գալ ես դաշտ։ Տւեցի դէպի ձախ և մի յիսուն քայլ չարած՝ ընկայ մի ճանապարհ, որով կարող էի թէ դէպի ձախ երթալ, որ կը տանէր դէպի Հին Մանգլիս և կամ դէպի աջ, որ կը տանէր ինձ նոր Մանգլիսի վերի մասերը։ Ես այդտեղ կանգնեցի մի հասած արտի և սկսեցի խորհել իմ մէջ, թէ ո՞ր կողմ երթամ, արդեօք աջ — դէպի վեր, թէ՞ ձախ՝ դէպի ցած։

Հենց այդ վայրկեանում ինձանից դէպի ձախ մի հարիւր քայլ հեռուից մի կին անցաւ ճամբից և մտաւ արտի միւս կողմի անտառակը։ Ես այդ բանին ոչ մի նշանակութիւն չտւի, ենթադրեցի միայն, թէ երեւի նոյն անտառներումն ուրիշներ էլ կան, նա էլ գնաց միացաւ նրանց հետ։ Ես երեսս շուռ տւի դէպի աջ ու սկսեցի վեր բարձրանալ մի զառիվեր տեղով։ Հազիւ մի յիսուն քայլ արի, ես անկարող զգացի ինձ շարունակել ճանապարհս, երեսս շուռ տւի և սկսեցի կամաց կամաց յետ դառնալ։ Երբ որ հասայ քիչ առաջ կանգնած տեղիս, այդտեղ մի հասկ կտրեցի և հաղաղեցի բռնումս, մէկ էլ նկատեցի, որ նոյն կինը նոյն հեռաւորութիւնից դուրս եկաւ արտի միջից և սրարշաւ վազելով անցաւ Բարաթովի ցանկապատից և անյայտացաւ այնտեղի բընակարաններում։

Ի՞նչ քաջ կին է, ինչ լաւ է վազում։ Երևի բան էր մոռացել տանը, գնաց բերելու։

Այս կնոջ երեսը ես չէի կարող տեսնել հարիւր քայլից, մանաւանդ նա չի էլ նայել դէպի իմ կողմը, գոնէ ես չեմ նկատել որ նայած լինի։

Չը նայած այս հանգամանքին, սա դարձաւ այն կտաւը, որի վրայ նկարւեց իմ գաղտնիքի սիննմատոգրաֆիական պատկերը։

Ես առանց կանգ առնելու, սկսեցի քայլել մինչև հասայ գիւղամուտքին Հին Մանգլիսի կողմից։ Հենց այդտեղ իմ առջև տնկւեցին երկու երիտասարդ մարդիկ, մինը շլեապայով, իսկ միւսը՝ կոկարդաւոր ֆուրաշկով, որ ձեռքին էլ ունէր մի հաստ ու երկար բնիր ցանկապատից հանած։

— Սպասեցէք, պարոն, ասեց բնիրաւորը, — դուք ինչպէս կը վարւէիք մի մարդու հետ, եթէ նա հետամուտ լինէր ձեր կնոջ պատիւը յափշտակելու։

Ես դեռ չիմացած, թէ այս բանն ինչու է հարցնում ինձ, ոչ տարայ, ոչ բերի, ուղղակի ասացի, ես նրան կը սպանէի։

— Ես չէի սպանիլ, բայց այո, այս փայտով նրան մի լաւ կը կոթկէի։

— Շատ լաւ, ասացի, նայած թէ ով ինչպէս է հասկանում պատիւ ասած բանը։ Ուրեմն վարւեցէք, ինչպէս դուք էք կամենում, էլ ինձ ինչո՞ւ էք հարցնում։

— Հարցնում եմ, որ ձեր լեզւով անեմ ձեր դատաստանը։ Այդ պատժի արժանին դուք ինքներդ էք։

Ես նոր աչք բաց արի և տեսայ, որ այս մարդը իրաւի պատրաստ է խօսքից գործի անցնել։ Ամբողջ դէմքը և մանաւանդ աչքերը այնպիսի կերպարանք էին ստացել, որ ինձ վըրայ խելագարի տպաւորութիւն գործեցին։ Ասացի.

— Պարոն, դուք ինձ վրայ զժանոցից փախածի տպաւորութիւն էք գործում։ Ձեր կոկարդից երեւում է, որ դուք ուսուցիչ էք, ուրեմն ինտելիգենտ մարդ։ Ես ինքս էլ ուսուցիչ եմ և ոչ միայն ուսուցիչ, այլև գրող։ Ուրեմն մենք կարող ենք և պարտաւոր ենք իրար խօսք հասկանալ և հասկացնել։ Մէկ ինձ, ասացէք տեսնեմ, այդ ինչ կնիկ է։

— Նա իմ կնիկն է, որին դուք հենց այս րոպէիս ետևից էք ընկել և սա էլ փախած տուն ընկաւ և մեզ պատմեց ձեր վարմունքը։

— Պարոն, ես կնիկների ետևից ընկնողներից չեմ, ես անկնիկ մարդ չեմ, ես քայլերս ոչ մի տեղ չեմ աբագացրել։ Ես շատ հեռուից տեսայ, որ մի կնիկ վազում էր դէպի տուն, բայց թէ ինչու էր վազում, ես այդ չգիտեմ։

— Իմ կնիկը սուտ ասող չէ։ Մեր կուխարկան նոյնպէս վկայում է, որ դուք նրա հետ սիրահարութիւն էք անում, երբ սա բազար է գալիս։

— Ձեր կուխարկան սուտ է ասում, պարոն, ես այս գիշեր եմ եկել, էսօր առաջին դուրս գալս է տանից, ես ոչ ոքի ոչ տեսել եմ և ոչ խօսել հետը։

Ուսուցչի ընկերը, չգիտեմ ինչ մարդ էր, արդեօք նոյնպէս ուսուցիչ էր թէ ուսանող. լուռ վկայ էր մեր վիճաբանութեանը, նա ոչ մի խօսք չհանեց բերանից։ Իսկ մենք, ես և ուսուցիչը, ինչ յիմար բաներ ասես, որ չասեցինք իրար։ Ես հարկադրւած էի ինքս ինձ ճանաչեցնել նրան ասելով.

— Առաջ մէկ իմացէք ես ով եմ, ինչ եմ, ինձ Աղայեանց կասեն, պարոն, ամբողջ հայ աշխարհը ճանաչում է ինձ իբրև տաղանդաւոր ուսուցչի և գրողի, բարոյական տեսակէտից ինձ համարում են ամենապատւական մարդ, մի տեսակ հայ Տոլստոյ, իսկ դուք ինձ Դոն-Ժուանի տեղ էք ընդունում։ Վերջապէս ձեզ խելի պատիւ չէ, որ չէք լսել հայ գրող Աղայեանցի անունը, իմ մանկական գրւածքները ձեր մանկական ամսագրերումն էլ կան տպւած։ Վերջապէս ի նկատի ունեցէք և ծերութիւնս։ Միթէ կարելի բան է, որ այս հասակում մարդ այդպիսի յիմարութիւն անի։ Մի խօսքով սկսեցի անկապ և կցկտուր, տեղի և անտեղի գովաբանել ինձ։

Նա էլ ոչ մի ասածս հաշւած խելքի տեղ չէր ընդունում։ Պնդում էր, որ ամեն կոչումի մարդ էլ կարող է անբարոյական լինել, իսկ ծերերին խօ խելք չի կարելի հաւատալ, ինչպէս երեւում է վիճակագրութիւնից։

Չնայած նրա ընդդիմախօսութեանը, բոլորովին զինաթափ եղաւ, ձեռքերը թուլացան, փայտը ձեռքից վայր ընկաւ, մոռացաւ, որ մարդ պիտի ծեծէր, և ներողութիւն խնդրելով, հեռացաւ։

Մարդիկը հեռացան, բայց ես մնացի տեղումս քարացած մի առ ժամանակ, յետոյ դիմեցի դէպի ռօշչան, այնտեղ նստեցի, որ շունչ առնեմ մի քիչ։ Ներւերս սաստիկ գրգռւել էին, շունչ քաշել չէի կարողանում, մինչև վերջապէս արիւն եկաւ բրոնխիտներս սաստիկ հազով։ Երկու ժամ անեց, մինչև անցաւ հոգեկան գրգռմունքս։

Միեւնոյն ժամանակ մտածում էի.— Այս ինչ փորձանք էր։ Այդ մարդիկը կարող էին իրենց մտադրութիւնը կատարել։ Բայց ինչո՞ւ չկատարեցին։ Արդեօք համոզւեցի՞ն, որ կինը կարող էր խաբւած լինել։ Բայց հիմա ես ինչ դիրք պէտք է բռնեմ դրանց վերաբերութեամբ, չյայտնեմ արդեօք ոստիկանութեանը։ Լրագրի նիւթ չշինե՞մ։ Ի՞նչ օգուտ դրանից։ Ինչո՞ւ աշխարհքը իմանայ, որ ես ենթարկւել եմ մի այսպիսի անպատւութեան։ Ոչ. աւելի լաւ է՝ լռել, ոչ ոքի չասել։ Այլ բան է, եթէ այդ պարոն ուսուցիչը ֆիզիքական վիրաւորանք չհասցնելով՝ վերցնէ ու գրէ մի լրագրում, թէ բա չէք ասել հայոց այս ինչ գրողը այսպէս խայտառակ բաներ է անում։ Այնուհետև, ուզեմ-չուզեմ, կըդիմեմ արդարադատութեան օգնութեանը։

Իմ այս խորհրդածութեան մէջ ամբողջ քաղաքական աշխարհը տակնուվրայ եղաւ, — ով ենք մենք, ինչ ենք մենք, ով է տիրող տարրը, ինչպէս է նայւում իր տիրածի վրայ. այս ինչ վիճակ է, ինչ կացութիւն...

Այսպէս խորհրդածելով, գնացի տուն ճաշելու։ Բայց ինչ կերթայ բկովս։

Նստել եմ տխուր, տրտում, երևի գոյնս էլ թռցրած։

— Այդ ինչ է, ինչ է պատահել քեզ, հարցնում են ամեն կողմից։ Նոյն իսկ բժիշկ Մելիք-Նուբարեանը, որ հիւր է մեզ մօտ, հետաքրքրւում է իմանալ, թէ ինչ տկարութիւն ունիմ ես։ Բժշկին ասում եմ, որ տխրութեան հիւանդութիւն է եկել վրաս, սա ի հարկէ ներւային տկարութիւն է, մի բան կը տաս գործ կածեմ, երևի շուտով կանցնի։

Միւս օրը նստած եմ մեր տան առաջին, յանկարծ նոյն ուսուցիչը անցնում է առջևովս և գնում է դէպի պարկ։

— Սպասեցէք, պարոն, — ասացի, — խօսք ունիմ ասելու ձեզ։ Արդեօք տիկինը համոզւե՞ց, որ սխալւած է ինքը։

— Ոչ, պատասխանում է, — նա ասում է, որ դուք քայլ առ քայլ հետամուտ էք եղել նրան։ Նա ասում է, որ ինքը հասկ է եղել քաղելիս, դուք էլ էք սկսել քաղել, նա հաղաղել է բըռնումը, դուք էլ էք հաղաղել։

— Շատ լաւ, ասացի, ճշմարիտ է, որ ես մի հասկ եմ պոկել և հաղաղել բռնումս, բայց ես նրան չեմ տեսել այդ բանն անելիս։ Ուրեմն աւելի նա է հետամուտ եղել ինձ, քան թէ ես նրան։ Խնդրեմ ասէք ինձ ձեր անունն ու ազգանունը և պաշտօնատեղին։ Այս բանը առաջ էլ խնդրել էի, բայց չէր ասել։ Այս անգամ ասեց։ Այս մեր վերջին տեսութիւնն էր։

Յետոյ ես ինձ ու ինձ սկսեցի այդ կնոջ վարմունքի հոգեբանական կողմը քննել, և եկայ այն եզրակացութեան, որ նա կարող էր այդ բոլորը երեւակայել, և այդ բոլորը պէտք է ծագած լինի իմ վերադարձից։

Անտառ գնալիս նա ինձ տեսել է, նկատել է, որ ես էլ իրան եմ տեսել. իրան տեսնելուց յետոյ ես բարձրանում եմ դէպի վեր, բայց քիչ անցած յետ եմ դառնում. «Այս մարդը ինչո՞ւ յետ դառաւ, երևի ուզում է գալ դէպի ինձ, տեսնելով որ ես մենակ եմ։ Ուրեմն եկ փախչեմ» և սկսում է փախչել առանց յետ մտիկ տալու։

Այստեղ կան և ուրիշ հոգեբանական կողմեր, շատ կանայք, բայց այդ վերլուծութիւնը ես չեմ ուզում անել։ Չեմ ուզում յայտնել նաև, թէ ով էր պարոն ուսուցիչը, բայց շատ կը ցանկանայի, որ նա կարդար այս նկարագրութիւնը, և եթէ սուտ բան գտնէր սրանում, ուղղէր և ճշմարտութիւնը վերականգնէր։

Ցաւենայն դէպս ես հրապարակով յայտնում եմ պարոնին իմ խորին շնորհակալութիւնս, որ նա կարողացաւ զսպել իր մէջ կատաղեցրած զազանին և իր մտադրութիւնը ի կատար չածեց։

Ո՞վ կը լինէր մեղաւորը, եթէ նա սպանութիւն գործեր, ի հարկէ, ոչ ինքը և ոչ ես։

Այս է անա իմ գաղտնիքը, որ մինչև այսօր ոչ մի հոգի չի լսել ինձանից և չասելու պատճառն էլ այն է եղել, որ այդ համարել եմ ինձ համար շատ մեծ անպատւութիւն։

Ես ինչպէս ասէի, որ ինձ մի այսպիսի բանում մեղադրեցին, մինչդեռ ես պէտք է այդ կողմանէ անձեռնմխելի լինէի։ Այստեղ իմ միտս է գալիս մեր Արովեանի «Էշն ու Բիւլբիւլը», մինչդեռ սոխակը վարդի գովասանքն է անում այսպէս ոգեւորւած, յանկարծ մի էշ է դուրս գալիս ու վարդենու թուփը հախռում ըռխով և ճմլըմորում։

Մինչդեռ ամբողջ Ռուսաստանը իր փառք ու պարծանքն է համարում Պուշկինին, որ ջահի պաշտօն էր կատարում իր հայրենիքին, յանկարծ որտեղից լոյս է ընկնում մի (Դանտէս ?) և հանգցնում այդ ջահը։

Պարոն ուսուցիչը թող գոհանայ Աբարքից, որ իրան ազատել է մի լոյս հանգցնելու դժբախտութիւնից։

Ղազարոս Աղայեան

*) Սոյն աշխատութիւնը, որ գտնւած է Ղ. Աղայեանի ձեռագրերի մէջ, տպագրում ենք իբրև մեր ականաւոր հեղինակի բնորոշութեան համար հետաքրքրական նիւթ։ Խմբ.

„ՀՈՐԻԶՈՆԻ" ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՑ

Էրզրում, 2[illegible]ի

Նոր եկած 8 հոգի ազ[illegible]արդ փախստականները հաստատ կերպով պընդում են, որ Ֆղիի շրջանում դզլբաշ քիւրդերի մէջ ազատւած կան 8 հազարի չափ հայեր և նոյնպէս Էրզրումի առաջնորդ Սմբատ եպիսկոպոսը կենդանի է։ Թերևս այս լուրը ճշմարտութիւնից հեռու չլինի, որովհետև առաջներում ես քանիցս անգամ լսել էինք, որ Սմբատ եպիսկոպոսը և Էրզրումի տեղահանւած հայ բնակչութեան մի ստւար մասը խուսափել է ընդհանուր կոտորածից դզլբաշ քիւրդերի ցոյց տւած օգնութեան շնորհիւ։

Գարեգին

ՏԱՐՕՆԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Մուշ, 18 մայիսի

Նկարագրել պատերազմական վայրից ամեն ինչ իր իսկական առումով կամ տեսակով կարելի չէ, որովհետև կուլի թատերաբեմը մի-երկու մղոն հեռաւորութիւն ունի քաղաքից . . . . լեռնաշղթայի ձիւնապատ գագաթների վրայ երեւում են ռուսական քաջարի զինւորները թշնամու կանոնաւոր զօրքի և քրդական աշիրէթներու դէմ։ Ցարձակումները շատ անգամ տեղի կունենան մերոնց կողմէն, որոնք միշտ յաղթական դուրս կուգան։

Հացի պակասը խիստ զգալի է, կոբեկ հացիւ կարելի է ճարել։ Անցեալ փետրւարի 14-ին, ռուս բանակը Մուշ մտնելու առթիւ, եղել է բաւականին ցորեն, սակայն այժմ ամեն ինչ սպառւած է։

Կան այստեղ հարիւրաւոր հիւանդներ, որոնց համար միայն մէկ հիւանդանոց կայ 18 մահճակալով և մէկ բժիշկով։ Տասնեակներով կը մեռնին այժմ, և վախ կայ, որ ամառւան տաքին օրական 50—60 հասնի մեռնողներու թիւը։ Ի հարկէ, հիւանդութիւնները առաջ են եկեր քաղաքի անմաքրութիւնից և սննդի պակասութիւնից։

Փողոցներում և քաղաքից դուրս ճանապարհները լիքն են մարդոց և անասնոց դիակներով։ Շրջակայ գիւղերում կան տասնեակ մարագներ, որոնց մէջ կերեւին հարիւրաւոր այրւածներու գանգեր. կին և երեխաներ միասին և տղամարդիկ առանձին այրւած են։ Ջրատուների մէջ կան տակաւին հարիւրներով մարդկանց թարմ դիակներ, որոնց թևերը մէկ-մէկու կապած ու սպանած են։ Այս բարբարոսութիւններն այն աստիճան առաջ էին գացած, որ կառավարութիւնը անմօթաբար խապալեաճի է կոչեր այս գիւղերը։ Տեղացի թիւրքերը կը խոստովանեն, որ այս ոճրագործութեանց պատճառ է եղեր մի գերմանացի միսիոնար, որը իր Աւետարանին տեղ սուրն է առել և քրիստոնէական հաւատքին տեղ մարդասպանութիւնն է քարոզել։

Սբ. Կարապետի վանքը իր ամբողջութեամբ այրւած ու քանդւած է. միջի բոլոր թանկագին իրեղէնները թալանւած ու կողոպտւած են։ Կը պատմեն, որ գերմանացիք շատ մը հնութիւններ փոխադրել են Բերլին։ Կան հազարաւոր ձեռագիր և տպւած հին գրքեր ցրւած վանքի աւերակներու մէջ։

Տապանաքարերը և միւս բոլոր թւական կամ գրութիւն կրող քարերը կոտրտւած են. եկեղեցու գմբէթը բոլորովին այրւած է։ Առաքելոց վանքը ենթակայ է նոյն վիճակին. նմանապէս և սբ. Յովհաննէսի վանքը Մուշից 4 ժամ հեռաւորութեան վրայ։ Մի քանի օր առաջ գեն. Ն..եանը հեռագրել է, որ Առաքելոց վանքի դուռն ու մի քանի կտոր թանկագին իրեր գտնւած են Բիթլիս, որտեղ թաղած են եղեր. դուռը միայն գնահատւած է 6,000 ոսկի։ Մի թիւրք պատմեր է եղեր Բիթլիսի մէջ, որ մի քանի գերմանացիներ ուզեր են փոխադրել դուռը Բերլին, սակայն ռուսաց յարձակումը ստիպեր է թողնել ու փախչել։

Լուր հասաւ, որ Մուշից մի օրւան ճանապարհի վրայ մի քիւրդ բէկ ազատեր է իր շրջանի բոլոր հայերը թւով 4,500։

Մեղրագետ և Եփրատ գետերու եզերքները լիքն են հազարաւոր մարդկանց ու կանանց դիակներով։ Մի պզտիկ երեխայ, դեռ հազիւ 13 տարեկան, կը պատմէր, որ իր մայրը, երկու պզտիկ երեխաները և ինքը նետեր են գետը և ինքը եզերքին ինկած լինելով ազատեր է։ Հիւանդանոցին մէջ հանդիպեցայ մի աղջկայ, տակաւին 11 տարեկան, որը մեռնելուց մի քանի օր առաջ ազատեր է աճճիկների ձեռքից. կը պատմէր թէ ինչպէս անգթօրէն բռնաբարել էին
զինքը տասնեակ զինւորները։ Թու
զինւորները հազարաւոր այսպիսի
հեր ազատեր են իրենց դիրք
կամ այլ վայրերում պատսպ
ժամանակ, իրենց մի կտոր չոր հաց
բաժին տալով նրանց, մինչև
հասնելը։ Շատերն ալ որդեգրե
այս կարգի երեխաները։

Յ. Վ.

ԳԱՂՏՆԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԸ

Թեհրան, 6 յուն

Մի քանի օր էր, որ պարսկ
շրջաններում յամառ կերպով լու
էին տարածւած դաշնակիցների
շարք անյաջողութիւնների մա
Ստայօդ լուրերն, առանձնապէս,
տում էին պարսկական հակառ
բաբերմամբ և մի քանի օրւա
Թօցքում թիւրք-գերմանական զօ
երեւակայաբար, մի կողմից մինչև
մանշահ և միւս կողմից՝ Թաւր
մօտ բերեց։ Ըստ այդ լուրերի,
պանալիքն այնքան ուժեղ էր,
ռուս զօրքը ստիպւած Թաւրիզ
Համադանը դատարկելու մասին
մտածում...

Հենց այդ օրերում ստացւեց Խան
նի և Ռւանդուզի ուղղութեամբ
ղած արիւնահեղ կռիւների և թ
զօրքի պարտութեան պաշտօնակ
տեղեկութիւնը։ Մի պարզ զուգա
պութիւն կարելի էր համարել
սական այս լուրերի միաժամա
տարածւելու հանգամանքը, եթէ ն
այլ զուգադիպութիւններ չգային եր
ւան բերելու այն պրոպագանդը,
ռանդուն կերպով առաջ է մղւ
գերմանոֆիլ տարրերի կողմից։

Այն փաստը, որ հակառամարտ
և պատերազմական գործողութիւնն
այս կամ այն դէպքի պաշտօնակ
զեկոյցից մի, թէ երկու օր առաջ
դէն այստեղ լուրեր են տարածւ
—ոչ լրիւ, բայց միշտ յօգուտ գեր
նական յաջողութիւնների, — ցոյց
տալիս, որ գերմանական կազմակ
պութիւնն այստեղ որևէ միջոցով
րագ տեղեկութիւններ է ստանու
իր ցանկացած ձեւով տարածում հա
րակութեան մէջ։

Գերմանացիք այստեղ մի զաղ
և արագ հաղորդակցութիւն ունե
րենց որև է կենտրոնի հետ։
նում հաստատւած մի ժամանակ
անթել հեռագիրն է շարունակում
ծել ապահով մի այլ վայրում, թ
հենց սկզբից գաղտնի պահւած մի
անթել հեռագիր, յայտնի չէ։ Այս
նը միայն հաստատ է, որ գերմա
կան կազմակերպութիւնն շարունակ
է իր պրոպագանդը և նախ քան թ
գերմանական անյաջողութեան լուր
րի հրատարակելը, շինծու տեղեկ
թիւններով ամբոխի մէջ հակառ
տրամադրութիւն է ստեղծում։

Դեռ մինչև այժմ էլ ամբոխի
մասը, հաւատ չընծայելով պաշտօն
կան լուրերին, համոզւած է, որ Ք
մանշահն ու Թաւրիզը դատարկւ
վտանգին են ենթարկւած, որ մի
անգլիական ռազմանաւերն են խո
տակւած և այլն։

Թւում է թէ գերմանական այդ կ
մակերպութիւնն իր ճիւղերն ունի
գաւառներում։ Իսկ այն վայրերու
ուր գոյութիւն չունին, ճիգեր
թափւում հաստատելու...

***

Ժողովրդի համակրութիւնը գրա
լու մտահոգութեամբ, ներկայումս կ
ռավարութիւնը լուրջ ուշադրութիւն
դարձնում այն բոլոր խնդիրների վր
որոնք անմիջական կապ ունին
գարնակութեան ցածր դասակարգ
հետ։ Ուրիշ խօսքով նա հակւած
կենսական մթերքների և նրանց
ժէքների վրայ։

Կառավարութեան գլուխ Սեփ
տարը իր անձնական փորձով գի
որ պարսիկ ժողովուրդը խաղաղ
հանգիստ կապրի այն ժամանակ,
կենսական մթերքներն առատ կլին
և էժան. գիտէ նոյնպէս, որ էջ
Մամէզ Ալին առելի էր ոչ թէ որ
հետև հացահատիկների սպեկուլյաց
յով էր զբաղւում։ Դիտակից յեղա
խականներ չէին, որ Սեփահսարի բ
րացրած «սահմանադրութեան» դրա
կի շուրջն էին հաւաքւել, այլ մեծ
սամբ քաղցած ամբոխը...

Փորձերի այդ գիտակցութիւնն
որ դրդում է ներկայ վարչապե
ուղղակի անձամբ զբաղւելու կենս
կան մթերքների խնդրով։ Շաբա
կրիզիսը մասամբ լուծեց միայն
փահսարի անխախտ կամքի շնորհ
հացահատիկների և հացի սղութիւն
կարգադրւեց գաւառներն արած
խիստ հրամանների շնորհիւ։ Ա
շատ քիչ վայրեր են մնում, որ հա
պակասութիւն զգան։ Նրա փոխա
խոշոր արտահանութեան պատճա
բրինձի պակասութիւն է զգացւ
օրէցօր արժէքը բարձրանում է։

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացել ենք.

Ուրմիայից Ս. Խալաֆեանի և Վ. Մ. Կարապետեանի միջոցով 209 ռ.։

Նուիրատուներն են.

Գ. Ա. Մանուկեան 50 ռ., Ա/տ. Եղբարք Բուդաղեան 25 ռ., Ս. Ժամհարեան 10 ռ., Եղբ. Աւագեան 10 ռ., Եղբ. Յարութիւնեան 10 ռ., Աֆթանդիլեան 10 ռ., Ա/տ. Եղբ. Ջաննանք 10 ռ., Եղբ. Մ. Ս. Սուլխանեան 10 ռ., Տ. Թովմասեան 10 ռ., Ա. Նազարեան 10 ռ., Ա/տ. Որդիք Ց. Խաչատուրեան 8 ռ., Ընկ. «Արարատ» 8 ռ., Ընկ. «Զոնիփրուշան» 5 ռ., Իւսուֆ բէկ (Երևանցի Թուրք) 5 ռ., Մ. Ղարիբեան 4 ռ., Մ. Բաբախանեան 4 ռ., Ա/տ. Եղբարք Մելիք Ջհանեան 3 ռ., Մագազին «Արարատ» 3 ռ., Կ. Ղարիբեան 3 ռ., Ոմն, Ց. Յոժանեան, Ց. Յովսէփեան, Ս. Գասպարեան 2-ական ռ.։

Արզումի սուրբ Յովհան Օձնեցու ուխտատեղում ժողոված 10 ռ. 35 կ.։

Նուիրատուներն են.

Սարիբէգ Սահակեան 1 ռ., Ենովք Ալավերդեան 1 ռ., Գարեգին Վահրամեան 25 կ., Անուշ Առաքելեան 20 կ., Եղիսաբէթ Պետրոսեան 10 ռ., Աշխէն ոսքելեան 10 կ., Նատալիա Խաչատրեան 50 կ., Նատալիա Բեղլուեանց 50 կ., Արշակ Սահակեան 10 կ., Սանդուխտ Անդրէասեան 20 կ., Անուշաւան Դաւթեան 20 կ., Պաւելական Կոստանեան 20 կ., Պետրոս Շահվերդեան 20 կ., Վարդիշախ Գրիգորեան 15 կ., Սիրատ Արովեանց 20 կ., Աշխարբէգ Շահվերդեանց 15 կ., Յարութիւն Ալոյեան 20 կ., Աքօրոս հասարակութիւն 5 ռուբլի։

Կոկանդից Համբարձում Պօղոսեանցի պսակադրութեան հանդէսին Համբարձում Առուշանեանցի միջոցով հանգանակած 49 ռ. 90 կ.։

Նուիրատուներն են.

Համբարձում Պօղոսեան և Ստեփան Օգանեանց 5-ական ռ., Համբարձում Առուշանեանց, Բախշի Ղառուլեանց, Նիկոլայ Ազամեանց 3-ական ռ., Սարգիս Մուրադեանց, Առաքել Կասպարեանց 2-ական ռ., Մարտիրոս Եղիազարեան, Միրզայ Բաբաջանեան, Շամիր Պետրոսեան, Նիկոլայ Ասկանդարեան, Սրտէմ Զախմախսազեան, Մուխան Կափրէլեան, Հայրապետ Կափրէլեան, Թէոս Կափրէլեան, Թարխան Մէլիք Ալավերդեան, Իսահակ Արզումանեան, Համբարձում Մամիկոնեան, Սոյի Մէլիք-Սէթեանց, Հայրապետ Աւանէսեան, Ներսէս Միրումեան, Արշակ Զալխոշեան, Աղայ Միրզայեան, Ստեփան Փանեան 1-ական ռ., Գրիգոր Խալաֆեան, Աստղիկ Սարգսեան, Մարգարիտ Կափրէլեան, Վարսենիկ Պօղոսեան, Սանդուխտ Բաբաջանեան, Վարդուհի Օգանեան, Սոֆիա Իսկանդարեան, Վարսենիկ Օգանեան, Կալէլիա Փարամազեան 1-ական ռ., Մարգարիտ Միրզաեան 50 կ., Աղիզ Կափրէլեան 40 կ.։

Ծանգօի շրջանի Թիւրքահայ բռստանճիներ՝ Երեմ Վարելճեանի և Գասպար Տէրտէրեանի միջոցով հանգանակած 246 ռ.։

Նուիրատուներն են.

Ս. Զաքարեան 25 ռ., Կ. Տէրտէրեան, Կ. Մաղլուեան, Ա. Բէօսէեան, Մ. Բէօսէեան, Տ. Վայրիզեան, Ց. Զաքարեան, Ա. Վարելճեան, Զ. Զաքարեան, Մ. Վարելճեան, Ց. Էզնատունեան 10-ական ռ., Գ. Օհաննեան 8 ռ., Մ. Էզլիեան, Ս. Բէօսէեան, Ս. Բէօսէեան, Գ. Օվակեան, Ա. Բէօսէեան, Մ. Էզլիեան 5-ական ռուբլի, Ե. Վարելճեան, Ս. Սիմոնեան, Ս. Յովակեան, Կ. Վարելճեան, Մ. Վարելճեան, Կ. Զաքարեան, Բ. Զաքարեան, Մ. Էզնատունեան, Գ. Գէզօեան, Գ. Զոփոիեան, Թ. Պօղոսեան, Կ. Տէրտէրեան 3-ական ռ., Ա. Զաքարեան, Մ. Վարդեան, Ե. Էզնատունեան, Լ. Էզնատունեան, Գ. Էօզուզեան 2-ական ռ., Խ. Վարդեան, Ա. Թերզիեան, Տ. Բէօսէեան, Ց. Էզնատունեան, Գ. Զաքարեան, Ց. Զիփիրեան, Մ. Օհաննեան, [illegible] Էզլիեան, Ա. Վարելճեան, Ե. Վ. [illegible] Շ. Վարելճեան, Լ. Օհաննեան, [illegible] Մ. Զաքարեան, Մ. Զաքարեան, [illegible] Ե. Զաքարեան, Ա. Զաքարեան, [illegible] Գույուբլիեան, Հ. Զաքարեան, Ց. [illegible]ճեան, Լ. Վարելճեան, Վ. [illegible] րելճեան, Ա. Զաքարեան 1-ական ռ., Ե. Զաքարեան 50 կ., Հ. Զաքարեան, Ե. Զաքարեան 20-ական կ., Ա. Զաքարեան 10 կ., Կ. Տէրտէրեան 1 ռ.։

Թ. Բաբաջանեանի միջոցով հաւաքուած Երզրումի գրաւման առիթով 56 ռ. 50 կ.։

Նուիրատուներն են.

Շաքրօ Ռուստամեան 5 ռ., Խալաթ Յարութիւնեան 50 կ., Եղբարք Բաբաջանեաններ 5 ռ., Յովհաննէս Յովասափեան 2 ռ., Սերոփ Սամսոնեան 5 ռ., Անտոն Դէտուզեան 1 ռ., Մկրտիչ Ղլտճեան 5 ռ., Գէորգ Թիրումեան 3 ռ., Մելիք Ստեփանեան 3 ռ., Արտէմ Խաչիկեան 5 ռ., Բարսեղ Ժամկոչեան 5 ռ., Иванъ Вардзигуловъ 1 ռ., М. Яскевичъ 1 ռ., Н. Назаровъ 1 ռ., Գրիգոր Թամազեան 3 ռ., Վասօ Էգիզարեան 1 ռ., Գրիգոր Զորաբեան 1 ռ., Օվանէս Թանդոյեան 1 ռ., Լևոն Գասպարեան 3 ռ., Վարդան Ուզունեան 1 ռ., Григоръ Кондахчевъ 1 ռ., Խաչատուր Մելիքով 2 ռ.։

Սուբաշի գիւղից (Հին-Ղրիմ) Ալէքս. Գալստեանի միջոցով 215 ռ.։

Նուիրատուներն են.

Յովհաննէս Բոչիկեան 15 ռ., Ալէք Զիքարեան, Սարգիս Ճերմակեան, Գրիգոր Տէրտէրեան, Լուսեղէն Թորոսեան, Նահապետ Տէրտէրեան 9-ական ռ., Խաչիկ Զիքարեան, Աղասէր Աւետեան, Յովհաննէս Թոփչեան, Յակոբ Տէրտէրեան, Սեդրակ Աւետեան 6-ական ռ., Երեմ Կարամարտիրոսեան, Գրիգոր Աւետեան, Գրիգոր Էրանոսեան 5-ական ռ., Յովսէփ Կարամարտիրոսեան, Սարգիս Աւետեան, Զատիկ Մալխասեան 4 ռ., Գիւլվարդ Էզրեան 4 ռ. 50 կ., Սահակ Թոյուզեան, Սարգիս Ռահանեան, Վարդան Զիքարեան, Համբարձում Զիքարեան, Մինաս Փիլոսեան, Կարապետ Տէրտէրեան, Խաչան Զիքարեան, Արութ Էրանոսեան, Մըկըր Էրանոսեան, Մարիամ Վայսէօրեան, Արմենակ Տէրտէրեան, Յովակիմ Էրանոսեան, Ներսէս Ներսէսեան 3 ռ., Սարգիս Զիքարեան 9 ռ., Յակոբ Աւետեան 10 ռ., Սրբուհի Ճերմակեան 3 ռ., Գարեգին Էզրեան 3 ռ., Խաչիկ Զիքարեան 1 ռ., Սեդրակ Մադիլեան 3 ռ., Կարապետ Տէրտէրեան 2 ռ., Աղամ Թոյուզեան 2 ռ., Վահան Տէրտէրեան 1—50 կ., Տիգրան Բեօսէեան 5 ռ., Սեդրակ Աւետեան 6 ռ., Սարգիս Աւետեան 4 ռ., Մելքոն Ճերմակեան 5 ռ.։

Ասլիէ Ատայի հայ տիկիններից Աշխէն Յարութիւնեանցի, Օվսանա Մելիք Կարակօզեանցի և Հեղինէ Դաւթեանցի միջոցաւ փետրուար ամսուան վճարները 16 ռ.։

Նուիրատուներն են.

Վ. Փաշուկեան 2 ռ., Ա. Յարութիւնեան, Օ. Մելիք Կարակօզեան, Հ. Դաւիթեան, Վ. Գարամեան, Ն. Օրդուխանեան, Մ. Գրիգորեան, Ս. Ամասեան, Ա. Ամասեան 1-ական ռ., Ե. Ղամբարեան, Ն. Նազանեան, Մ. Ներսիսեան, Մ. Գրիգորեան, Մ. Իշխանեան, Հ. Օրդիեան, Ս. Պօղոսեան, Շ. Գրիգորեան, Օ. Նազարեան 50-ական կոպ.։

Տեօֆի Բեազի հայ մանր վաճառականների ժողովից նոյեմբեր ամսուար վճարն 158 ռ. 50 կ.։

Նուիրատուներն են.

Բախշօ Տէր-Մաթէոսեան, Բասիլ Բաբասեան, Արտաշէս Գրիգորեան, Ներսէս Գափրեան, Խաչատուր Ամիրաղեան, Խրիստափոր Մելիք-Մաթէոսեան, Գէորգ Տէր-Թոմասեան Աւետիք Բախշինեան, Յովհաննէս Աղասեան, Տալիթայ Գափրեան 5-ական ռուբ., եղբայրք Բասենցոֆներ և եղբ. Մաղաքեաններ 10-ական ռուբ., Երւանդ Դադաշեան, Աւագ Աւագեան, Ստեփան Արովեան, Յովհաննէս Մկրտումեան, Յարութիւն Վանցեան, Յարութիւն Բաղդիեան, Ալէքսանդր Գրիգորեան, Մ. Վիլվիլեան, Սէրգօ Եազարով, Գէորգ Սփրիկեան, Ալեքսէյ Մովրաձէ, Սերգէյ Պապով, Դարչօ Գալուստեան, Ստեփան Սօմխիև, եղբ. Զիրչեան 3-ական ռուբ., Մարգար Անորոնեան, Լևոն Տէր-Ղևոնդեան, Սէրգօ Յակոբեան, Գէորգ Գալստեան, Լազար Տէր-Գրիգորեան, Գրիգոր Յարութիւնեան, Սարգիս Գալուստեան, Միքայէլ Զորաքեան, Գարեգին Վիլվիլեան, Սեդրակ Յարութիւնեան, Դարչօ Թաթուլով 2-ական ռուբ., Վանօ Այվազեան 1 ռ. 50 կ. Վախտանգ Ամիրեան և Տէր-Խաչատրեան 4 ռուբ., Մսերեան և Թարվերդեան 5 ռուբ., Միքայէլ Կախորով, Թոմա Օնիկաձէ, Բախշօ Օգանով, Սարգիս Գասպարեան, Սէրգօ Գոզալեան, Յովհաննէս Յարութիւնեան, Գէորգ Պօղոսեան, Կարապետ Խաչատրեան, Արտեմ Կուզանով, Արտեմ Էյլազով, Մարգար Մարգարեան 1-ական ռուբ.։

Յարութիւն Տէր-Պօղոսեանի հարսանեաց հանդիսին, Յակոբ Տէր-Պօղոսեանի առաջարկութեամբ հանգանակած 56 ռուբլի։

Նուիրատուներն են.

Արշակ Ղուչչեան, Սամսոն Ղուլէչեան 5-ական ռուբ., Պօղոս Բուդաղեան, Միրզա Յարութիւնեան, Յակոբ Տէր-Պօղոսեան, Յարութիւն Տէր-Պօղոսեան, Արամ Բուրանեան, Միխակ Քամալեան, Դանիէլ Պետրոսեան, Մովսէս Բուդաղեան 3-ական ռուբ., Եփրեմ Բուդաղեան, Արամ Մխիթարեան, Գէորգ Զաքարեան, Հայաստան Քամալեան 2-ական ռուբ., տիկ. Անուշ Տէր-Պօղոսեան, տ. Հռիփսիմէ Միրզոյեան, տ. Վարինկա Բուդաղեան, Գէորգ Եզորեան, Մաշադի Բեազիմ Բաղիրով, տ. Սոնա Բուդաղեան, Վասիլ Աղբալեան, տ. Վարինկա Քամալեան, Արշակ Վարդանեան, տ. Սոնա Վարդանեան, Գրիգոր Ռեստեմյանեան, Աւետիք Ազամեան, տ. Կատարինէ Ոսկանեան 1-ական ռուբ.։

Ալէքսանդր Գոզալեանի որդու մկրտութեան հանդէսին հաւաքուած 10 ռուբ. 50 կոպ.։

Նուիրատուներն են.

Ալէքսանդր Գոզալեան 2 ռ., Սամսոն Գասպարեան 1 ռ. 50 կ., Արտաշէս Ասոյեան, Յովսէփ Յովհաննիսեան, Գէորգ Տէր-Աւետիսեան, Լևոն Մեբունեան 1 ռ., Հմայեակ Սարգսեան, Գրիշա, Մկրտիչ Կարագէօզեան, Մարտիրոս Կարագէօզեան, տիկին Մարիամ, տիկ. Դունեա 50-ական կոպ.։

Սիզրանի հայերից Լ. Խանամիրեանի միջոցով 103 ռուբ.։

Նուիրատուներն են.

Լ. Խանամիրեան 50 ռ., Վ. Ենգիբարեան 10 ռուբ., Գ. Տէր-Ղազարեան 15 ռ., Բ. Մանասեան 5 ռ., Ց. Մարգարեան, Մ. Ստեփանեան, Փ. Օգանէսեան 3 ական ռուբ., տիկ. Ս. Ստեփանեան, Կ. Սրաբիոնեան 2-ակ. ռ., Մ. Տէր-Գարեգինեան 1 ռ., Ս. Մելիքսէթեան 30 կ., Կ. Իսկանդարեան 3 ռ., հայ զինուորներ, Ս. Իպրաչեան 2 ռ., Ա. Արուստամեան, Ա. Փոլեան 1-ական ռ., Վ. Տէր-Յովսէփեան 50 կ., Վ. Նազարեան, Հ. Գուգիեան 25-ակ. կոպ.։ Գումարն է 103 ռ. 30 կ., որից դուրս է եկած 30 կ. պոստի ծախս։

Շուշւայ գաւառի Սարուշէն գիւղից 15 ռ. 50 կ.։

Նուիրատուներն են.

Մովսէս Մ. Բարսեղեան 60 կ., Արսէն Բալայեան, Դաւիդ Յակոբեան, Սլէյման Գասպարեան, Գրիգոր Յովհաննեան, Համբարո Սիմոնեան, Խաչատուր Համուզեան, Սարուխան Բախշիեան, Դադաշ Բախշիեան, Եփրեմ Յարութիւնեան, Նիկոլա Յակովբեան, Մարտիրոս Գասպարեան, Բալասի Բադալեան, Համբարձում Համբարձումեան 50-ական կոպ., Արշակ Աբազեան 2 ռ., Մնացական Մաթէոսեան 1 ռ., Միսակ Յարութիւնեան 1 ռ., Ներսէս Առստամեան, Սմբատ Առստամեան, Իսակ Մարտիրոսեան, Յովսէփ Գասպարեան, Առաքել Սահակեան, Մելիքսէթ Միրզաբէկեան, Սայի Դաւթեան, Աւագ Յովհաննէսեան, Ամիր Հայրիեան, Գիրիշ բէկ Լալաբէկեան, Արշակ Ալէքսանեան, Արսէն Հայրիեան, Գրիգոր Միրզաբէկեան 20-ական կոպ., Միքայէլ Բաբայեան 40 կ., Միրզա Միրզաբէգեան 30 կ., Յովհաննէս Առստամեան 25 կ., Սահակ Յարութիւնեան 15 կոպ., Թէոս Աւետիսեան 15 կ., Սիմոն Աղաջանեան 50 կ., Մելիքսէթ Յարութիւնեան 40 կոպ.։

Եկատերինոդարի շրջանից՝ Շանջէրհայլի խուրից՝ Մելքոն Մակարեանի միջոցով հանգանակած 196 ռ. 90 կ.։

Նուիրատուներն են.

Մուրադեան Պետրոս 10 ռ., Պետրոս Կապանեան 15 ռ., Մ. Մակարեան 15 ռ., Մ. Լուսպարեան 7 ռ., Կ. Պապինեան 5 ռ., Ց. Յովսէփեան, Կարապետ Օքսուզեան, Մ. Մակարեան, Աղամ Մանուկեան, Սեդրակ Նայլեան, Մհերան Յովսէփեան, Աբրահամ Սալուլեան, Սարգիս Խոճիկեան, Մկրտիչ Խոճիկեան, Գէորգ Մակարեան, Համբար. Վարդանեան, Զարդար Մանուկեան, Մարիամ Մակարեան 3-ակ. ռ., Խաչատուր Մարտիրոսեան, Գրիգոր Մակարեան, Յարութիւն Օքսուզեան, Համբարձում Մարտիրոսեան, Մկրտիչ Մարտիրոսեան, Աղամ Մարտիրոսեան, Սերովբ Յովսէփեան 5 ական ռ., Աբգար Զոլաքեան 10 ռ., Վաղարշ Մեղրիկեան և Մարիամ Մեղրիկեան 2 ռ. 50-ական կոպ., Տրդատ Խոճիքեան, Թադէոս Մարտիրոսեան, Եղսան Լուսպարեան, Տիրուհի Մակարեան, Արամ Մեղրիկեան, Առաքել Քոսկոլեան 2-ական ռ., Մարտիրոս Թոփալեան, Վարդան Առաքելեան, Լուկիան Իւվաշչենկօ, Մեղրիկեան Վահրամ, Միսակ Մանուկեան, Յովսէփ Սարիեան, Մելքոն Մարտիրոսեան, Յակոբ Աղաճեան, Գրիգոր Մանուկեան, Վաղարշակ Լուսպարեան, Սեդրակ Մանուկեան, Զարդար Մանուկեան, Վարդանոյշ Մանուկեան, Վարսենիկ Սալուլեան, Արուսեակ Մարտիրոսեան, Էլմաս Մարտիրոսեան, Պայծառ Մարտիրոսեան, Հայկան Աղմաճեան, Զարդար Խոճիքեան, Մարիամ Մակարեան, Լուսիկ Թոփալեան, Աղնիւ Կապանեան, Աննիկ Յովսէփեան, Թագուհի Յովսէփեան, Եւա Զոլաքեան, Շուշանիկ Մարտիրոսեան, Արմենուհի Մարտիրոսեան, Վարդուհի Մանուկեան, Տիրուհի Մուրադեան, Աղաւնի Մեղրիկեան, Աննիկ Մարտիրոսեան, Վարդուհի Նայլեան, Պայծառ Բէօսեան, Հայկուհի Մակարեան, Աղնիւ Մանուկեան, Քարչուք Մեղրիկեան, Տիգրանուհի Մեղրիկեան և Կիրակոս Մանուկեան 1-ական ռուբ., Պետրոս Մանուկեան 4 ռուբ., Վարդուհի Օքսուզեան, Աննա Օքսուզեան, Մենտուհի Քոնդաքճեան 50-ական կոպ., Իւան Սոկոլով 40 կ.։

Ղարասու Բազար, Սուլլուր գիւղից Հայկ Երանոսեանի սանահայր Զատիկ Խրիստակեանի տանը հրաւէրին Երւանդ Երանոսեանի միջոցով հաւաքուած 51 ռուբ.։

Նուիրատուներն են.

Ալէքսան Երանոսեան 10 ռ., Երւանդ Երանոսեան, Պօղոս Թէրզեան, Զատիկ Խրիստակեան 5-ական ռուբ., Լևոն Վասսէօր, Միսակ Երանոսեան, Մարիամ Երանոսեան, Վարդուհի Երանոսեան, Աղնիւ Տէմիրչեան 3-ական ռուբ., Մկրտիչ Տիլինեան և Խասիք Թէրզիեան 2-ական ռ., Կիրակոս Երանոսեան, Սաշա Երանոսեան, Վասիլ Թինև, Մարիամ Տիլինեան, Մարիամ Խրիստակեան, Աննիկ Խրիստակեան և Եւա Երանոսեան 1-ակ. ռ.։

Զոլախաչից Դանիէլ Տէր-Վահանեանի միջոցով Արամ Յարոյեանի, ընդ օր. Սիսէ Մնացականեանի, հարսանեաց հանդէսին հանգանակած 6 ռ.։

Նուիրատուներն են.

Արամ Յարութ. 1 ռ., Տէր-Վահան, Դանիէլ, Մխիթար, Սահակ, Զիւան, Խաչօ Գալ., Խաչօ Պէտր., Մնաց., Վարդան, Մաղաթ 50-ական կոպէկ։

Գորիսից Պօղ. Պօղոսեանի պսակադրութեան հանդիսին հանգանակած 25 ռ. 35 կ.։

Վաղ. Յովակիմեանից, Աշտարակ, 27 ռ. 89 կոպ.։

Սամարղանդից Ռաֆ. Ռաֆայէլեանի միջոցով 62 ռ. 33 կ.։

Նուիրատուների ցանկը տես գաղթականների բաժնում։

Տէրտէր կայարանից Երզրումի գրաւման առթիւ կայացած խնճոյքին հաւաքած 37 ռ. 25 կ.։

Նուիրատուների ցուցակը տես գաղթականների բաժնում։

Կիևի հայ ուսանողներից 144 ռուբ. 87 կոպ.։

Նուիրատուների ցուցակը տես գաղթականների բաժնում։

Պետրոգրադի Ռուս-Ասիական բանկի հայ ծառայողներից 100 ռուբ.։

Քիզեցի Պօղոս Փափազեանից 2 ռ. 50 կ., Յովհ. Սիրականեանից 2 ռուբ., Համբ. Դաւթեան 1 ռ., Ովաննա Բոլոյեան 1 ռ.։

Արուսեակ Յակոբեանից, Վաչագան գիւղ (Ղափանի շրջ.) իր անմոռանալի ամուսին Փաշա Յակոբեանի յիշատակին 10 ռ.։

Պետրոգրադի Ռուս-Ասիական բանկի հայ ծառայողներից 100 ռ.։

Թիֆլիսի արական պրոգիմնազիայի IV և VI դասարանների աշակերտներից՝ ուսուցիչ Գէորգ Տէր-Սարգսեանի միջոցով 7 ռ. 9 կոպ.։

Իշխան Մ. Ղազիեանից, Գրոզնի, 10 ռ.։

Միխայլովօ կայարանից Գր. Մինասեանի երեխայի մկրտութեանը հաւաքած 14 ռ. 40 կոպ.։

Նուիրատուներն են.

Խ. Փալանջեան, Ա. Աղաջանեան, Օ. Երիցեան 3-ական ռ., Գ. Մինասեան, Վ. Մխիթարեան, Մագր. Փալանջեան, Ա. Պետրոսեան 1-ակ. ռ., Մ. Մխիթարեան, Հ. Մինասեան վանեցի, Մայրիկ, Մարգ. Պետրոսեան, Ս. Վարդանեան, Ս. Մելիքեան, Ա. Պետրոսեան 20-ակ. կոպ.։

Սիբիր, Չերեմխովօ գիւղից, Մովսէս Խաչատուրեանի որդու մկրտութեան հանդէսին Թորգոմ Տէր-Իսահակեանի միջոցով հանգանակած 20 ռ. 70 կ.։

Նուիրատուներն են.

Հոգևոր հովիւ Սիբիրի հայերի Եղիշէ քահանայ Ռուստամեան, Մովսէս Խաչատրեան, Հմայեակ և Համազասպ Մարաշլեաններ Թորգոմ Տէր-Իսահակեան, Արամ Կիրակոսեան, Կարապետ Արշակունի, Մակար Պետրովիչ, Արտաշէս Սազանդարեան, մի ռուս ժարդ իր ամուսնու հետ, Յարութիւն Պօղոսեան և այլք։

Մոսկուա, Զատիկ Վաթուլեանից 4 ռ. 75 կոպ.։

Զանգլի գիւղից (Կաղզւանի գաւ.) Լևոն Ղ[illegible]րեանի միջոցով 20 ռ.։

Տ[illegible], Գերասիմ Մելիք-Ղարագ[illegible]անից 10 ռ.։

Ախալքալաք՝ Զումբուլ Մելքոնեանից մատաղի փոխարէն 10 ռ.։

Կարսից Յով. Յովհաննէսեանի տանը, իր առնախմբութեան առթիւ Համ. Մանուկեանի միջոցով հանգանակած 25 ռուբ.։

Ալէքսանդրապոլից Մկրտիչ Սարգըսեանի հարսանիքին Կար. Տէր-Մինասեանի միջոցով հաւաքած 25 ռուբ.։

Մարտ և ապրիլ ամիսների վճարները Քիզեցի Պօղոս Փափազեանից 5 ռուբ., Յովհ. Սիրականեանից 4 ռ., Համբ. Դաւթեանից 2 ռ., Ովս. Բոլոյեանից 2 ռուբ.։

Պետրոգրադի Ռուս-Ասիական բանկի հայ ծառայողներից 100 ռ.։

Կ. Կ. Եղիազարեանից, Պետրոգրադ, 58 ռ. 50 կ.։

Նուիրատուներն են.

Ա. Անանեան 12 ռ., Գ. Եղիազարեան 16 ռ. 50 կոպ., Հ. Արէշեան 6 ռուբ., Լ. Գրիգորեան 12 ռ., Ա. Իսզրաչեան 12 ռ.։

Գորիս, Սոֆիա Մելիք-Մնացականեանից 5 ռ.։

Սարատով, ուսան. Գ. Թառայեանից, 1 ռ. 50 կ.։

Եալտա, «Ռոսսիա» սրճարանի յաճախորդների միջև կայացած վիճակախաղից 11 ռ. 50 կոպ.։

Սամարղանդ, Ստ. Չերնեանից և Շամիր Աստուածատրեանից Ս. Ք. Սարգսեանի միջոցով 15 ռ.։

Սուրամ, Միխակօ Չարէքեանի հարսանիքին հանգանակած 20 ռ.։

Վեստկա, Աստուր Թառայեանից, 10 ռ.։

Բիտա գիւղի հասարակութիւնից Յար. Յովհաննիսեանի միջոցով 12 ռ. 57 կ.։

Նորովայա, Կարապետ Մարտիրոսեանից, յունուար և փետրուար ամսավճարները 30 ռ.։

Լազոդախի, չորս պատանիների՝ Աշոտ Տէր-Պօղոսեանի, Սարգիս Հարունեանի, Գէորգ Վարդանեանի և Վահան Ղարախանեանի «Աւետիսման ղալուց 32 ռ.։

Կոկանդ, Գրիգոր Դանիէլեանից 10 ռ.։

Բայդարի փոքրիկ գաղութից յունուար, փետրուար և մարտ ամիսների վճարը 76 ռ. 50 կ.։

Նուիրատուներն են.

Գալուստ Թաշճեան 15 ռ., Նահապետ Թաշճեան 18 ռ., Տիգրան Թաշճեան 15 ռուբ., Արշակ Եալղուզեան 9 ռ., Արմենակ Էքսիւզեան 9 ռ., Ստեփան Տէրտէրեան 6 ռ., Լևոն Նիկոլեան 3 ռ., Սարգիս Տեվերմէնճեան 1 ռ. 50 կ.

Կարս, Յովհ. Մուրադեանի տանը, իր փեսայ Նշան Տէր-Պօղոսեանի պսակադրութեան երեկոյին հաւաքած 46 ռ.

Կոկանդ, Համբ. Մամիկոնեանի երեխայի մկրտութեանը Մեսր. Արզումանեանի միջոցով հաւաքած 60 ռ.։

Կերճ, քեմազցի Սահակ Հայրապետեանից 50 ռ.։

Ալէքսանդրապոլ, Յուսիկ Տէր-Մկրտիչեանի միջոցով 108 ռ. 29 կոպ.։

Նիկոլսկ-Ուսսուրիյսկի հայ հասարակութեան սեպտ. և հոկտեմբ. ամիսների վճարը 67 ռ.։

Գոլոդնայա-Ստեպ Յարութիւն Սարգըսեանի և Եփրեմ Հայրապետեանի երեխաների մկրտութեանը Եսայի Իսպիրեանի միջոցով 63 ռ. 25 կոպ.։

Նուիրատուների ցուցակը տես գաղթականների բաժնում։

Հին-Նախիջևանի Ջահուկ գիւղ, Տիգր. Յովսէփեանից իր հօր Նիկոլայի գերեզման օրհնէնքին 5 ռ.։

Թիֆլիսից Արտաշէս Կարճիկեանի միջոցով մի փոքրիկ խնճոյքից 10 ռ.։

Կախ. Աւան, Վարդուհի և Խաչատուր Անդրէասեաններից իրենց որդի Բագիկի հիւանդութիւնից բժշկվելու առթիւ 5 ռ.։

Ալէքսանդրապոլ, Վաղարշակ Աղաբարեանից 10 ռ.։

Բուզովնագի, Յովսէփ Բաղդիկեանից 5 ռ.։

Սխխան, Թաղա-գիւղի հասարակութիւնից, Գէորգ Գրիգորեանի և Նիկ. Կըմինեանի միջոցով 15 ռ.։

Հին-Ղրիմ Մարտիրոս Տէր-Կարապետեանի միջոցով 15 ռ.։

Նուիրատուներն են.

Օհաննեաններ՝ Մարտիրոս, Արշալոյս 5-ական ռ., Յակոբ, Գէորգ 1-ակ. ռ., Քարանուշ, Նունուֆար, Միսակ, Անդրանիկ, Աղունիկ և Աննա 50-ական կոպէկ։

Բաչգանիի մանր վարկի ընկերութիւնից 21 ռ.։

Դիլիջան, Տ. Ասլանեանի միջոցով 26 ռուբ.։

Նուիրատուներն են.

Տ. Ասլանեան 6 ռ., բժ. Սար. Յովսէփեան 5 ռ., Արշ. Մարտիրոսեան [illegible] ռ., Վ. Յովհաննիսեան 3 ռ., Թ. Թեֆքելեան, Ս. Տէր-Սահակեան 2-ակ. ռ.. Տ. Բադալեան, Տ. Մեհրաբեան, Մկ. Թոքաճեան 1-ակ. ռ., Արս. Ղումաշեան, Հ. Գրիգորեան 50-ական կ.

Իրկուտսկ, Մառաշլեանի դստեր՝ Տիրուհու մկրտութեան Եղ. ք. Ռուստամեանի միջոցով 38 ռ.։

Սխխան, Ուզ գիւղ, Նիկ. Կարապետեանի և Մ. Տէր-Կիրակոսեանի միջոցով հանգանակած 41 ռ. 30 կ.։

Ալէքսանդրովսկ - Գրուշևսկիի հայ գաղութից Մկ. Շարոյեանի և Աբր. Աբրահամեանի միջոցով 104 ռ.։

Նուիրատուներն են.

Բ. Յովհաննիսեան 15 ռ., Մ. Շարոյեան, Գ. Աթօեան, Բ. Յովհաննիսեան 10-ական ռ., Լ. Մեսանիկեան [illegible] ռ., Ա. Աբրամեան, Ա. Աթաչեան, Ե. Աթօեան, Շ. Կուետնջեան, Լ. Դալաւթեան, Թ. Մեսանիկեան, Գ. [illegible]եան 5-ական ռ., Մ. Մեսրոպեան, Ա. Բթաւեան, Մ. Յարութիւնեան 3-ակ. ռ., Ա. Ղասապաչեան, Սան-Րեմօ, Ս. Բալլաջեան, Ս. Գրիգորեան, Վ. Դաքախեան, Գ. Դեմուրչեան, Մ. Աթօեան, Գր. Զիթթալեան 1-ական ռ.։

Ընդամենը 3,146 ռ. 69 կ.

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացել ենք.

Տաշքենտ, Աղաջան Բաղդասարեանի տանը իր ամուսնու՝ Կատարինէ Բաղդասարեանի քառասունքը կատարելուց մի խումբ յարգողներից, Միրզա Տէր-Խաչատրեանի և Դաւիթ Գաբրիէլեանի միջոցով, հանգանակած յուղարկաւորութեան Տաճկաստանից փախած որբերի 61 ռ. 80 կոպ., որը փոխադրեց Էջմիածին Ամենայն Հայոց Կաթողիկոսին։

Նուիրատուներն են.

Միրզա Տէր-Խաչատրեան 10 ռուբ.

Այդ հողի վրայ եղած դժգոհութեան առաջն առնելու նպատակով, որոշուած է արգելքներ դնել անչափ արտահանութեան դէմ և այնքան թոյլ տալ, որ նորմալ արժէքների վրայ ազդեցութիւն գործել չկարողանան։ Դրա հետ միաժամանակ արգելւած է նաև գառան մորթու արտահանութիւնը, թէ ինչ նկատումներով, պարզ չէ։

Ե. Լ. Մ.

ՔԵՌՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մարսէլ, 29 յունիսի
(հեռագրով)

Մեր յարգանքները Քեռիի աճիւնին և Թնձուլդի հերոսներին։

Նախագահ Կովկասի հայ կամաւորներին օժանդակող կոմիտէի
Շապանեան

ԱՆՄԻՏ ԱՂՄՈՒԿ

I

Երևանի թեմական ժողովում և Թիֆլիսի մամուլի մէջ աղմուկ է բարձրացել ինձ դէմ։ Մեղադրում են ինձ իբրև Երևանի Թեմական Դպրոցի պատմութիւնը գրողի։ Կրքերը բորբոքել են հայկական բարքերին վայել սանձարձակութեամբ։ «Հորիզոն»-ից (№ 132) տեղեկացայ, որ թեմական ժողովի մեծամասնութիւնը նոյնիսկ կամեցել է վճիռ կայացնել, առանց ինձ լսելու, հիմնւելով լոկ այն երեսլի մեղադրական նիւթի վրայ, որ Թիֆլիսից տարել էր պատգամաւոր Սահակ Թորոսեանը, այս ամբողջ աղմուկի երջանիկ հեղինակը։

Իմ փրփրած մեղադրողներին հանգիստ պատճառելու համար ես հրապարակով յանձն եմ առնում, թէ ինչ մեղքեր ունիմ այս գործի մէջ։

Մեղաւոր եմ, նախ և առաջ, որ 1914 թւի սկզբին ընդունեցի Երևանի Թեմական Դպրոցի Յոբելեանական Մասնաժողովի հրաւէրը և յանձն առայ գրել դպրոցի 75-ամեայ պատմութիւնը և գրեցի մի խոշոր հատոր 4 ամսւայ ընթացքում, ինչ մի ուրիշը չէր անի և մի տարւայ մէջ։

Մեղաւոր եմ, որ այս շտապողականութիւնը ես առաջին պայման դրի ինձ համար, աչքի առաջ ունենալով, որ դպրոցը խեղճ է, աղքատ է և պիտի շուտով, մի երեք ամսից յետոյ տօնէ իր յոբելեանը և նրա միջոցին պահանջէ իր գրութիւնը։ Մի ուրիշը կը պահանջէր օգնական, արտագրողներ։ Ես չարի այդ։ Մեն-մենակ տարայ գործի մէջ, ինձ վրայ վերցրի ամբողջ դժւար ծանրութիւնը։ Մեղաւոր եմ։

Գիշերը օր դարձրի, մէջքիցս կոտրւած, մի յարմար սենեակից, հանգստանալու միջոցից զուրկ, տեսնողների զարմանքը շարժելով այս անօրինակ անդուլ աշխատանքով։ Մեղաւոր եմ։

Ճիշդ կէսից հեռուն գնացի։ Հիւանդացայ, բայց և մի րոպէ չդադարեցրի աշխատանքս։ Վկայ եմ կանչում յարգելի բժիշկ Յովհ. Տէր-Միքայէլեանին։ Ձախ աչքիս տակ պալար (չիբան) էր դուրս եկել։ Բժիշկը կտրեց ու կապեց։ Համարեա ամբողջ երեսս ծածկւած էր կապոցների տակ։ Բայց ես խնդրեցի այնպէս փաթաթել, որ գոնէ աչքիս մի մասով կարողանամ տեսնել։ Ամբողջ մի ամիս աշխատեցի այսպէս, մինչև կէս գիշեր, տանջւելով ցաւից, հազիւ կարողանալով վրաս պահել ծանրացած գլուխս։ Մի ուրիշը կը թողնէր կերթար։ Ես չարի, որպէսզի իմ այնքան սիրած հայ դպրոցը միջոց ունենայ յոբելեան տօնելու, իրեն ապահովելու։ Ինձ մոռացայ դպրոցի համար։ Մեղաւոր եմ։

Մեղաւոր եմ, որ իմ գրած պատմութիւնը Յոբելեանական Մասնաժողովի գլխին չդցեցի ու չգնացի իմ գործին, տեսնելով, որ Մասնաժողովը անճար է, մտածելով, որ ոչ ոք չպիտի կարողանայ տպագրել տալ այդ խոշոր հատորը, ինքս յանձն առայ տպագրելու հոգսերը, դարձեալ որպէսզի իմ սիրական դպրոցը կարողանայ սեպտեմբերին իր տօնը տօնել։ Եւ գործս թողած, վազում էի Թղթավաճառի մօտ, այնտեղից տպարան, շտապեցնում, ամեն ջանք գործ դնում, որ գրքերն էժան լինեն, դպրոցը չվնասւի։ Մեղաւոր եմ, կրկնակի մեղաւոր։

Եւ ահա, հայեր, այսքան ծանր յանցանքներով ծանրաբեռնւած մի հայ է կանգնած ձեր առջև։ Ինչպէս չպիտի քարկոծէք նրան։ Ինչպէս չպիտի թու-թու անէք նրան։ Ինչով էք դուք վատ ձեր նախնիքներից։ Ինչպէս չպիտի լինէք նրանց հարազատ սերմերը։

«Մեր հայ, արժանի չենք այլ վիճակի», տխուր, մելամաղձիկ շեշտով հնչում էր մեր ջրատար Նալբանդեանը։

Այսօր էլ միևնոյնն է։

II

Գործը չափազանց շտապողական էր, ասացի։ Հարիւրաւոր դոկումէնտներ ես ինքս եմ արտագրել, հարիւրաւորը արտագրել եմ տւել Հոգաբարձութեան քարտուղար պ. Տէր Մանուէլեանին, և այնուամենայնիւ, անհրաժեշտութիւն էր զգում, գործը շուտ վերջացնելու համար, մի քանի երկրորդական նշանակութիւն ունեցող փաստաթղթեր ուղարկել ուղղակի տպարան։

Այս ամեն տեղ ընդունւած, սովորական մի բան է։ Մօտ երեք տարի կառավարիչ լինելով Բագւում մի մեծ տպարանի, ես հարիւրաւոր այդպիսի դէպքերի ականատես եմ եղել։ Այսպէս 1894—1895 թ. Բագւի քաղաքային վարչութիւնը «Արօր» տպարանում տպել տւեց ինժեներ Ալտուխովի հրակայական ծրագիրը Կուր գետից ջուրը տանելու համար։ Դա մի մեծածախս աշխատութիւն էր, բնական դոկումենտ, որ քաղաքին հարիւր հազարներ էր նստել։ Ծրագիրը գրւած էր «թագաւորական» կոչւող ամենաընտիր թղթի վրայ, չքեղ ձեռքով զարդարւած նկարներով։ Տպարանին յանձնւեց այդ բնագիրը, որի լուսանցքներում բազմաթիւ ցուցմունքներ կային գրաշարների համար, գրւած մատիտով։ Եւ տպելուց յետոյ այդ թանգագին ձեռագիրը վերադարձւեց քաղաքային վարչութեան։ Տպարանն, ի հարկէ, ամեն միջոց ձեռք էր առել որ ձեռագիրը մաքուր պահւի։

Ես կարիք էլ չունէի, լաւ տեղեակ լինելով ամեն տեղ ընդունւած կարգին, թագցնել որևէ մէկից իմ արածը։ Հոգաբարձութեան ես առիթ չէի ունենում ցոյց տալու ուղարկւող թղթերը, քանի որ աշխատութիւնս մաս մաս, գրելուն պէս, շտապում էի պոստին յանձնել, որպէսզի տպարանը չուշացնէ տպագրութիւնը։ Բայց ահա Ղարաբաղի թեմ. դպրոցի պատմութիւնը գրելիս էլ ես այդպէս էի վարւել։ Վերջացնելով ամբողջ գործը, ես կազմել տւի այդ անգին հատորը, որ մի քանի օր մնաց Հոգաբարձութեան նախագահի մօտ և որ զեկուցւեց հոգաբարձական նիստին։

Այսպէս, բնագիր-թղթերը տպարան ղրկելը ոչ մի անսովոր բան չէ ներկայացնում։ Տանում են տպարան, յետ են ստանում տպարանից և էլի իրենց տեղերն են դնում։

Ես էլ այսպէս պիտի անէի։ Բայց այստեղ ինձ սպասում էր մի մեծ դժբախտութիւն։ Այդ այն էր, որ ես ճանաչեցի Գիւտ քահանայ Աղանեանի տպարանի ճանապարհը։ Մարդուն միշտ չէ տւած դժբախտութիւնը նախատեսելու և նրանից ժամանակին ազատւելու կարողութիւնը։ Երևանի դպրոցի պատմութեան իմ անգին ձեռագիրը, որ 1500-ի չափ երեսներից էր բաղկացած, մտաւ քահանայի տպարանը, բայց այդ տեղից այլևս դուրս չեկաւ։ Եւ այսօր լրագիրներից եմ իմանում, որ քահանան թէ իմ այդ ձեռագիրը, թէ նրանից յետոյ մտած այլ չորս ձեռագրերը, ընդհանուր առմամբ մօտ 3000—3500 երես, համարել է իր սեփականութիւն ու ոչնչացրել է։

Կարելի է ինձ մեղադրել, թէ չեմ նախատեսել այս դժբախտութիւնը։ Եթէ կարելի է, այն ժամանակ նախ դատապարտեցէք այն մարդկանց, որոնք պահ էին տւել այն քահանային հանգուցեալ Կոստանդին Խատիսեանի արծաթէ պսակները, արժողութեամբ, կարծեմ, 5000 ռուբլի։

Երկու խօսք այդ վաճառական հոգեւորականի և իմ յարաբերութիւնների մասին ասել անհրաժեշտ է՝ այս ամբողջ անվայել գործի ստորը ցոյց տալու համար։ Քանի որ Գիւտ քահանան ինձանից իր տպարանի համար պատւէրներ էր ակնկալում, ես նրա համար և՛ «բարեկամ» էի և՛ «մտերիմ» (ունիմ նամակներ) և նա յաճախ գալիս էր իմ տունը իմ յանձնարարութիւնները կատարելու համար, ցոյց տալով ինձ անփոփոխ ժպտուն դէմք, պատրաստակամութիւն։ Բայց այս բոլորը շպար էր՝ յաճախորդ գրաւելու համար։ Անցեալ տարւայ վերջերին ես նրան նկատողութիւն արի, որ ինձ համար տպած մի գրքի գինը շատ բարձր է նշանակել և կարծեմ 20—22 ռուբլի էլ կարճեցի նրա գրած հաշւից (ապացոյցները մօտս են)։ Աղանեան քահանան զգաց, որ ես իր տպարանի համար այլ ևս միանգամայն անօգուտ եմ և փոխեց իսկոյն։ Նա, որ թղթով (խնդճ թուղթ) իմ «բարեկամն» էր, իմ «մտերիմն» անգամ, մի քանի գրոշի պատճառով դէն գցեց ամեն ինչ և դարձաւ իմ կատաղի թշնամին։ Փաստեր չեմ բերում, խնայելով լրագրի էջերը։ Այո, ճիշտ էին իմ ծանօթները, երբ, լսելով որ ես Աղանեանի տպարանում գիրք եմ տպել տալիս, իրենց զարմանքն էին յայտնում։

Միայն այսօր, յունիսի 16-ին, ես կարողացայ տեղեկանալ «Հորիզոնից» Գիւտ քահանայի այդ ստեղծագործութեան մի քանի մանրամասնութիւնների մասին։ Նա մի շշմեցուցիչ սուտ է յերիւրել և բաց թողել հայոց երկնքի տակ։ Բայց մոռացել է եկեղեցու պաշտօնեան, որ ստի պոչը կարճ է լինում։ Ուզեցել է իմ ոտի տակը փորել, բայց ինքն է ջուխտ ոտով ընկել իր փորած հորի մէջ։

Նա ասում է, որ գրաշարները մի փաստաթուղթ շարելուց յետոյ գցել են տպարանի զամբիւղը։ Ինքը Գիւտ քահանան հանել է այդ փաստաթուղթը, ուղարկել է ինձ, բայց ես յետ եմ դարձրել, ասելով թէ անպէտք բան է։

Այս ամբողջ յերիւրանքը սկզբից մինչև վերջ, իր բոլոր տառերով ու գծերով, ստութիւն է, բացարձակ, աննախընթաց։ Յերիւրանքը կատարւած է անշնորհք, կոպիտ կերպով և ամեն մէկը, որ գոնէ մի անգամ գործ է ունեցել տպարանի հետ, իսկոյն կըմբռնէ ստութիւնը։

Գրաշարը, եթէ ուզենայ էլ, չէ կարող իր շարած նիւթը զամբիւղ գցել, քանի որ նա թէ իր շարւածքը և թէ բնագիրը պիտի յանձնէ սրբագրողին, որ և պահում է իր մօտ այդ նիւթը՝ երեք անգամ սրբագրութիւն կատարելու համար։ Արդ, Երևանի թեմական դպրոցի պատմութեան սրբագրողը եղել է ինքը Գիւտ քահանան, որև առանձին վարձատրութիւն է ստացել դրա համար։ Եթէ եղել է մէկը, որ նիւթի հետ վարւել է ինչպէս կամեցել է, զամբիւղ գցելով թէ փչացնելով կամ կորցնելով, այդ եղել է միմիայն Գիւտ քահանան, նախ իբրև սրբագրող, ապա և իբրև տպարանատէր... Ոչ մի գրաշար նոյն իսկ ֆիզիքական հնարաւորութիւն չունէր անելու այն, ինչ վերագրում է քահանան։

Ստութեան այս մասը ակնյայտնի է։ Եւ նա ջախջախում է յերիւրանքի միւս մասն էլ։ Գիւտ քահանան չէր համարձակւի ինձ ցոյց տալ իր ձեռքի գործը հենց այն պատճառով, որ ինձ մօտ չէր կարող կրկնել գրաշարի և զամբիւղի երեխայական թոթովանքը։

Աւելի անհեթեթ, ծիծաղելի է այն սուտը, որ իբր թէ ես վերադարձրել եմ նրա ուղարկած փաստաթուղթը, ասելով թէ անհարկաւոր բան է։ Ո՞ւմ է տպարանատէր քահանան երեխայ համարում—իրա՞ն, թէ հասարակութիւնը։ Եթէ իրօք իմ ձեռքը հասած լինէր այդ փաստաթուղթը և ես նրան անհարկաւոր համարած լինէի, ինչն էր ինձ արգելում գցել նրան իմ զամբիւղը և ինչու ես մէկ էլ պիտի տէր Գիւտին համեցէք անէի։ Չլինի՞ թէ [illegible] հանդերձ ես խնդրել եմ տէրտէրին որ այդ թղթի միջոցով ինձ դէմ դաւ սարքէ։ Այդ է միտք որ ասէ նա։ Այն ժամանակ ամենայն ինչ կատարեալ կը լինէր։

Գիւտ քահանան շիտակութիւն չէ ունեցել այս գործի մէջ։ Եթէ ունենար շիտակութիւն, եթէ կորրեկտ և ուղղամիտ մարդու պէս վարւէր, իր մօտ եղած դպրոցական թղթերը կուղարկէր թեմ. դպրոցի հոգաբարձութեան, յիշատակելով հենց այն՝ թէ ես չեմ ընդունում այդ թղթերը։ Բայց այդպէս անելով, ինտրիգի ու դաւի տեղ այլ ևս չէր մնայ։ Եւ քահանան սպասել է ամբողջ երկու տարի, դարտուղի և անպատիւ ճանապարհների է դիմել։ Այսպիսի մարդը պիտի ինձ փաստաթղթեր ուղարկէր։ Ծիծաղելի է մտածելն անգամ։

Այս է Գիւտ քահանայի ամբողջ յերիւրանքը։ Եթէ նա մի բան ապացուցանում է, այդ հենց այն է որ Երևանի թեմական դպրոցի թղթերը գտնւում են, 1914 թւից ի վեր, հենց իր, Գիւտ քահանայի մօտ, որ եթէ նա մինչև այժմ չէ վերադարձրել այդ թղթերը, նշանակում է որ գողթել է և սրա համար էլ նա պիտի դատապարտւի, նա պիտի պատասխանի հրաւիրւի։ Հետևաբար, այս ամբողջ աղմուկը, որ բարձրացւած է ինձ դէմ, առնւազն անմիտ է։

Հենց որ Երևանից լուրեր հասան ինձ դէմ լարած այս սև ինտրիգի մասին, ես շտապեցի, դեռ յունիսի 8-ին, նամակով խնդրել Երևանի թեմական ժողովի նախագահ գեր. Խորէն եպիսկոպոսին, որ միջնորդէ Վեհափառ Կաթողիկոսի մօտ նշանակելու մի յատուկ մասնախումբ թեմ. դպրոցի պատմութեան տպագրութեան բոլոր հանգամանքները քննելու համար։ «Հորիզոնից» իմացայ, որ թեմական ժողովը այդ քննութիւնը յանձնել է հոգաբարձութեան։ Սա մի անպէտք որոշում է։ Հոգաբարձութիւնն էլ շատ մեղք ունի այս գործի մէջ, ուստի հարկաւոր է մի անկախ մարմին։ Այս բանն էլ պահանջում եմ ես ներկայ տողերով։

Ես ուրիշ իմ բացատրութիւնները այն հանգամանքների վերաբերմամբ, որոնք ինձ յայտնի են դարձել լրագրութիւնից։ Աւելի ընդարձակ մանրամասնութիւններ ես կը տամ քննութեան ժամանակ, երբ սև ինտրիգը ամբողջովին բացւած կը լինի առջևս։

Ի վերջոյ երկու խօսք այս աղմուկի հեղինակ պ. Սահակ Թորոսեանին։ Ուրիշ բան եթէ չլինէր, հենց այն հանգամանքը, որ ես ձեր ուսուցիչն եմ եղել և դուք ինձանից միայն լաւութիւն էք տեսել, պիտի պարտաւորեցնէր ձեզ Թիֆլիսում հանդիպել ինձ և տեղեկանալ իմ իմացածիս, լսել իմ բացատրութիւնը։ Դուք այդ չարիք։ Հարազատ քերան հանդիսացաք Գիւտ քահանայի համար, թեմական ժողովում գրպարտեցիք ձեր ուսուցչին, մոլորեցրիք մարդկանց միտքը և իմ անունը քաշքշել տւիք երկու նիստի մէջ...

Ձեր վարմունքը որակելը ձեզ եմ թողնում։ Իսկ ես, մարդկօրէն խղճալով ձեզ, ամբողջ սրտից ցանկանում եմ, որ ձեր ուսուցչական կեանքի մէջ երբէք ձեզ պէս աշակերտ չունենաք։

Լէօ

ՊԱՏԵՐԱԶՄ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

ԳԵՐ. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՑՏԱՐԻՑ

17 յունիսի

Արեւմտեան ճակատ.—Դնեստրից դէպի հարաւ մեր զօրքերը հետապնդում են թշնամուն։ Պանիկայի մէջ նահանջող աւստրիացիները ձգում են շատ սայլեր և գոյքեր։ Շարունակւում են գերիներ բերել։ Զեկոյցներ են ստացւած՝ Օբերտին գիւղը և դրանից դէպի հիւսիս ու հարաւ գտնւած շրջակայ գիւղերը կռւով վերցնելու մասին։ Պիստին գիւղի մօտ (Կուտի քաղաքի հիւսիս-արևմտեան կողմը) կռիւ է տեղի ունենում։ Վերջին կռիւներից մէկում վիրաւորւած է քաջարի գեներալ Կոմս Կելլեր։ Սոլովին գիւղի մօտ, Ստոխոդ և Ստիր գետերի միջև (Սոկուլից դէպի արևմուտք) գերմանացիները փորձեցին առաջ շարժւել, նախապէս բաց թողնելով գազի մի ամպ, որը դեռ չըհասած մեզ՝ քամու հոսանքով յետ դարձաւ մասամբ դէպի գերմանացիները։ Գերմանական յարձակումը յետ է մղւած, թնդանօթային կրակը շարունակւում է։ Յունիսի 16-ի առաւօտեան թշնամու օդաչուները Լուցկի վրայ մօտ 30 ռումբ նետեցին։ Կոզրան գաղութի մօտ, Լիպա և Ստիր գետերի միացման տեղից դէպի հիւսիս-արևմուտք, մեր զօրամասը փոխ-գնդապետ Գրեմբեցկու հրամանատարութեան տակ անհաւատալի կերպով մտնելով գաղութին և նոյնանուն գիւղին, Սեւհակար անելով գաղութի բերդապահ զօրքը, նա ներս խուժեց բուն գիւղը։ Թշնամին սարսափահար փախաւ։ Գերիներ են վերցւած։

Դվինա գետի ճակատի վրայ թշնամու արտիլերիան ռմբակոծում էր մեր դիրքերի մի մասը Ռիգայից դէպի հարաւ-արևելք և Իկսկիւլի նախակամրջի ամրութիւնը։ Իլլուկստից դէպի հիւսիս գերմանացիները երեկ երեկոյեան յարձակման փորձ արին, բայց յետ քշւեցին մեր թնդանօթների կրակով։ Յունիսի 15-ի երեկոյեան գերմանական ծանր ու թեթև արտիլերիան ուժեղ կրակ էր բացել մեր խրամատների դէմ Նեման գետի վրայ, Նովոալեքսանդրովսկից դէպի հիւսիս-արևելք։ Այդ կրակի պաշտպանութեան տակ թշնամին անցաւ Նեմանից և տիրեց Գնեւիշի գիւղի արևելեան կողմը գտնւած անտառակին։

Կովկասեան ճակատ. — Գիւմիշխանէի ուղղութեամբ թուրքերը յունիսի 15-ի լուսադէմին մեծ ուժերով յարձակման դիմեցին մեր առաջաւոր զօրամասի դէմ և, պատռելով նրա գիծը, դուրս եկան թիկունքը։ Տաք կռիւ փրթեց։ Մեր զօրքերն արագօրէն վերականգնեցին իրենց դրութիւնը, և թուրքերը, մեծ կորուստներ կրելով, յետ մղւեցին։ Հետապնդելով թշնամուն, մեր զօրքերն առաջ անցան, ուր և ամրացան։

17 յունիսի

Արեւմտեան ճակատ.— Կոլոմբնեա (Կոլոմէա) քաղաքը, Բուքովինայի երկաթուղիների կարևորագոյն հանգոյցը, գրաււած է այսօր մեր ձախ թևի զօրքերով։ Թշնամին յետ է քաշւում դէպի արևմուտք, պաշտպանւելով առաջուց պատրաստւած դիրքերի վրայ։ Կիմպոլունգից դէպի հիւսիս-արևմուտք թշնամին փորձում է յարձակման դիմել աւելի խոշոր ուժերով։ Գեն. Լեչիցկու զօրքերը իրենց առաջխաղացումը կատարում են ամենադժւարին պայմաններում, որովհետև խիստ հեղեղները փչացրել են առանց այն էլ վատ ճանապարհները այդ քաջարի զօրքերի գործողութիւնների շրջանում։ Լիպա և Ստիր գետերի միացման տեղից (Լուցկ-Բրոդի գծի մէջ տեղը) թշնամին, ծանր ու թեթև արտիլերիայի կրակի աջակցութեամբ, յարձակման դիմեց մեր դիրքերի դէմ Գաննիի և Նատալին գիւղերի մօտ։ Մեր զօրքերը դիմանալով թոյլ տւին, որ թշնամին մօտենայ երկաթալար արգելարաններին և ապա շեշտակի գնդակակոծեցին։ Լիպա գետի շրջանում թշնամին, մի անգամ յետ մղւելով, պատրաստւում է երկրորդ յարձակման։ Ըստ վերջին զեկոյցների գերիների ընդհանուր թիւը մայիսի 22-ից մինչև յուն. 15-ը հասել է 212,000-ի, հաշւելով դրանց մէջ և սպաները։ Գերիների հոսանքը շարունակւում է։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱՐԵՄ

ՓԱՐԻԶ, 16 յունիսի. — Երեկոյեան պաշտօնական հաղորդագրութիւն։ Մաասի ձախ ափին, կատաղի ռմբակոծութիւնից յետոյ, որ բռնել էր «304» լանջից մինչև Աւոկուր անտառի տարածութիւնը, գերմանացիները ցերեկւայ ժամը մօտ 4—30 ր.-ին գրոհ տւին «304» բարձունքից դէպի արևմուտք գտնւած դիրքերի վրայ, սակայն յետ վանւեցին հրացանային կրակով և կրակէ պատնէշով։ Կէսօրից յետոյ բաւական եռուն ձեռնառումբերի կռիւ էր տեղի ունենում Աւոկուր անտառում։ Աջ ափին հետևակազօրքի կռիւ չնկատւեց. շարունակւում է արտիլերիայի չափազանց եռուն գործունէութիւն Ֆլերի, Վօ անտառ, Շապիտր ու Շեննուա ճակատամասերում։

ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

ԱԹԷՆՔ, 15 յունիսի.— Յունաստանի և Թիւրքիայի միջև Բուլղարիայի վրայով միակ հեռագրական հաղորդակցութիւնը կտրւած է։ Հաղորդակցութեան ընդհատումը վերագրւում է զօրքերի մեծ առաջխաղացութեամբ դէպի Թրակիա։

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 16 յունիսի.—Սոֆիայից հաղորդում են. Ազգային ժողովի արտակարգ նիստը բացեց մինիստր-նախագահ Ռադոսլաւովի կողմից, որ կարդաց Ֆերդինանդի գահաճառը՝ հրաւիրելով ժողովին քննել հետևեալ կիսամեայ բիւջէն, որպէսզի շարունակւի կռիւն ու թշնամուց պաշտպանւին գրաււած թանգարժէք գաւառները։

Զինւորական իշխանութիւնների կարգադրութեամբ Ռուշչուկ-Վառնա և Ռուշչուկ-Ստարա Զագորա գծերի վրայ ուղևորների երթևեկը ամենախիստ կերպով արգելւած է։ Այդ արգելքը բացատրւում է բուլղարական զօրքերի դէպի ռումինական սահմանը շարժւելով։

ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՀՌՈՄ, 16 յունիսի.— Հաղորդագրութիւն իտալական շտաբի։ Ադիջէի և Բրենտայի միջև մենք շարունակեցինք մեր յարձակումը, չնայած թշնամու աջող դիմադրութեան, որ հասաւ կանխաւ իր պատրաստւած դիրքերին։ Վալարսայում մեր ալպեան հրաձիգները գրոհով գրաւեցին Մատտասոնէ բերդը և մեր հետևակազօրքի մասերը Տրապպոլա լեռնաշղթան։ Երեկոյեան ընթացքում թշնամին ուժեղ գրոհ տւեց Ցոնիա շրջանում, որպէսզի մեր յարձակումը արգելէ, սակայն յետ մղւեց մեծ կորուստներով։ Տազուբինայում մենք մի քանի խրամատ վերցրինք Մալգա—Կոմանենտեյի մօտ։ Պոզինա գծի երկարութեամբ մեր յարձակումը դժւարանում էր բնական պայմանների և Խորկոլայից ծանր թնդանօթների կրակի պատճառով. սակայն մեր զօրքերը թշնամուն վանեցին քերծերից, հասան [illegible] և գրաւեցին Մախօ լերան վրայի Բեստայի ամրացած դիրքերը։ Աստիկոյի ձորում գրաւեցինք Գրեգոյկալան։ Սեւաթ-Կոմանի սարահարթի վրայ թշնամին ամրացրեց Ասսա ձորի բարձունքների հիւսիսային լանջերը, Դալմարարայի ձախ ափին, մինչև Անեօյօ կիրճը։ [illegible] վայրում թշնամուն աջողեց իր գնդացիրները հաստատել այն ժամանակ, երբ նրա ծանր արտիլերիան ռմբակոծում էր մեր յարձակման գիծը։ Մենք հաստատւեցինք Ասսա ձորի հարաւային կողմ և գրաւեցինք Ցեզիօ—Ցենդարելլայի մօտի խրամատը։ Մնացած ճակատի վրայ, բացի Կարսոյից, ոչ մի փոփոխութիւն չկայ։ Մեր հետևակազօրքին աջողեց մտնել թշնամու խրամատների մէջ և գրաւել դրանցից մի քանիսը։ Յունիսի 15-ին մենք վերցրինք 656 գերի, որոնց մէջ 21 սպայ, 4 գնդացիր, զէնքեր ու ռազմամթերք։

ԾՈՎԻ ՎՐԱՅ

ԼՈՆԴՈՆ, 15 յունիսի.—Ընկղմւած են ճապոնական «Դեւսեւմարու» և իտալական «Կօարա» շոգենաւերը ու իտալական «Ալբենտինօ» առագաստանաւը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 16 յունիսի.—«Պետրոլին» նաւի սուզանաւով խորտակման մասին աւստրիական յուշագրին ամերիկեան պատասխանում մէջ է բերւած յարձակման փաստ՝ … խախտւած վիրաւորանք … Նահանգների դրօշին և … ամերիկեան քաղաքացիների … ւունքների դէմ, պահանջելով … ջապէս ներողութիւն խնդրել … սուզանաւի հրամանատարին … նրը հատուցանել։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՊԵՏՐՈԳՐԱԴ, 15 յունիսի.— … րագատութեան մինիստրը … ների խորհուրդ մացրել մի … գիծ, որով քրէական պատաս… տւութեան պիտի ենթարկւին … սամթերքների կամ անհրաժեշ… գները շահագործման … բարձրացնող կամ իջեցնող … կանները ու տրգինարարողները …

ՊԵՏՐՈԳՐԱԴ, 17 յունիսի.—«Անտրա-տրգինարարական լրագ… թակիցների և Պետր. Հեռ. Գ… լութեան Աւետրական Բաժա… հեռագրական հաղորդագրութ… համաձայն Ռուսաստանում … 15-ին հունձը ընդհանրապէս … բնլապէս գոհացուցիչ է երև… ռանձնապէս աշնանացանը … բարձր է, գարնանացանը մէջ … նանացանի ցորենն ու հաճարը … կից բարձր են, գարնանացանը … թոյլ զարգացած լինելով մա… ցուրտ ու չոր եղանակից, նրա … մեծամասնը թոյլազոր են … նում, սակայն ընդհանուր … գոհացուցիչ են։

ՕԴԵՍՍԱ, 16 յունիսի.—Վերջին օ… րերս Ջրասոյզներին աջողեց … կուրխած-ի I և II կարգի … եակներից հանել աւելի քան 50 …, որոնց թւում են գիւղացիակ… կի Օդեսսայի բաժանմունքի … անգամ Մոլլերի և Խերսոնի … նային դատարանի պրոկուրո… նական Զիժևսկու մարմինները։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԼՈՆԴՈՆ, 17 յունիսի.—Դ… մահւան վճիռ արձակեց Ռո… մենտի մասին, ճանաչելով ն… տարբերապէս մեղաւոր պետ… ւաճանութեան մէջ։

ՍՏՕԿՀՈԼՄ, 16 յունիսի.— [illegible] խուռն բազմութիւն հաւաքւեց … դամեան հրապարակի վրայ՝ … տին համակրանք յայտնելու … Ցուցարարներին ցրելու գործ… նակցեցին զօրքերն ու ոստիկանութիւնը։ Բազմաթիւ ձերբակալութիւններ են կատարւած։

ԿԱՀԻՐԷ, 15 յունիսի. — Մեքքայի շերիֆի կողմից Թիւրքիայից անկախութիւն հռչակելուն պատճառով և… գլխաւոր կառավարութիւնը … ձեռնարկեց քննելու դէպի Մեքքա ուխտագնացութիւնը թ… լու հարցը։

ՓԱՐԻԶ, 16 յունիսի.—Հասա… նանների մինիստր Բարեր … բալ Բելեայից։

ԼՈՆԴՈՆ, 16 յունիսի … նից հաղորդում են. Ե… ազատ չարձակի ամերիկ… րին մինչև չորեքշաբթի … սոնը կոնգրեսի համաձայն… խնդրի ազատելու նրանց …

ԷԼ-ՊԱՍՍՕ, 17 յուն… զուգէի մօտ գերի վերցր… ցիներ հասան …

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Պետական Դումայի անդամ Պապաջանեանը հեռագրել է Ներսէս եպիսկոպոսին, որ սենատոր Միլլիւտինը կարգադրել է գաղթականական գործի գլխաւոր լիազօր գեներալ Թամամշեւին, որ փախստական երեխաների որբանոց-պատսպարաններին համար Մեսրոպ եպիսկոպոսի տրամադրութեան տակ դրւի 250,000 ռ.։

◆ Թէեւ Հ. Կ. Կոմիտէն որոշել էր ամառւայ ամիսներին իր գաղթական դպրոցներում շարունակել պարապմունքները, բայց Ուսուցչական Կոմիտէն աննպատակայարմար է գտել իրականացնելու այդ որոշումը։

◆ Մեսրոպ եպիսկոպոսը պ. Ս. Աստւածատուրեանից ստացած 1000 ռ. յանձնել է բժ. Կրեսսին՝ Ալաշկերտի շրջանում գտնւող փախստական երեխաների կարիքների համար։

◆ Քաղաք. Միութ. Կովկ. բաժանմունքը Էրզրումի նոր հիւանդանոցի համար, վաղն ուղարկում է երկրորդ սանիտարական խումբը՝ բաղկացած 14 հոգուց։

ԼՐԱՏՈՒ

ԹԻՖԼԻՍ

Մի քանի պատւիրակների բողոքի ․․ն վրայ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարգադրել է յետաձգել Ցովսէփեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւնները՝ մինչեւ ծագած վէճերի պարզաբանութիւնը։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 7-ին ․․․․․․ Սփոփանքի» այգում, Մի․․յէլեան փող., կայանալու է հանդիսաւոր պաշտամունք Պետրոս յիշատակին։

◆ Այսօր, Զուբալովի անւան ժողովրդական տանը, կայանալու է ժողովրդական համալսարանի տարեկան ընդհանուր ժողովը։

◆ Հայոց Հրատարակչական ընկ. վերջին ընդհանուր ժողովում միաձայն ընկերութեան պատւաւոր անդամ է ընտրւել յայտնի հարուստ Գ. Օ. Ղուկասեանը։

◆ Հայոց Ազգագրական ընկերութիւնը շնորհակալութեամբ ստացել է՝ տիկին Մարգարիտ Աբեանից մի հարիւր ռուբլի, տ. Մ. Ղարաջեանից 25 ռ., պ. պ. Ա. Ամիրաղեանից և Գ. Տէր-Յովհաննիսեանից յիսնական ռուբլի։

◆ Քաղաքների Միութեան Կովկ. բաժանմունքը Վանից ստացել է մի հեռագիր, որով շտապով ալիւր են պահանջում տեղական ազգաբնակչութեան համար։

◆ Աւճալայի ջրմուղի մեքենաներից մէկի փչանալով յունիսի 16-ին քաղաքին 400,000 դոյլ պակաս ջուր մատակարարւեց, որի պատճառով ազգաբնակչութիւնը մնաց առանց ջրի. քաղաքային վարչութիւնը արտակարգ միջոցներ է ձեռք առել մեքենան նորոգելու համար։

◆ Յունիսի 16-ին կայացած քաղաքային վարչութեան և քաղ. բժիշկների խառն նիստում պարզւել է, որ քաղաքի սանիտարական դրութիւնը բաւարար է. այդ պատճառով էլ սուր-վարակիչ հիւանդութիւնները, համեմատաբար պակասել են այնքան, որ այժմ № 40 հիւանդանոցի մի մասը տրամադրելի է այլ հիւանդների համար։

◆ Քաղաքային վարչութեան անդամ Զաքարը ռազմավիրական ճանապարհով մեկնեց Վլադիկաւկազ տեղն ու տեղը ուսումնասիրելու քաղաքի ․․․լիւրը ուշացնելու պատճառների մասին և պարենքատար գնացքների երթեւեկութիւնը կանոնաւորելու համար։

◆ Դաստւորող հիւանդանոցի գլխաւոր բժիշկ Ն. Մինասեանը մեկնել է Նիժեգորոդեան նահանգ, Սորմովսկու գործարանից Քաղաքների Միութեան Կովկ. բաժանմունքի աւտոմոբիլների նորոգութեան համար մասեր գնելու։

◆ Նորին Մեծութեան Կայսրուհու անւան Թիֆլիսի պահեստը յունիսի 14—15-ը նւէր է ստացել 5,097 ռ. 69 կոպ.։

◆ Փոխ-նահանգապետ Պանինը ․․․յանել է քաղաքային վարչութեանը, ․․իր կողմից արգելք չի հանդիպի ․․ի և պանրի այժմեան սակագնի ․․․ութիւնը։

․․․գեկից խմիչքներ ծախելու համար ․․․ նահանգապետը տուգանել է Ս. ․․․իանեանին 2,000 ռ., իսկ Գիսեան․․ն 1,500 ռ.։

․․․նցեալ օրը, պարսկահպատակ ․․․ովհրդեանը յայանեց գաղտնի ոստիկանութեանը, որ ինքը Ալէքսան-

գրեան այգում երկու անյայտ ժողովականցից 350 ռ. գնել է տաճկական գլխի ոսկի, որ յետոյ պարզւել է նրանց կեղծ՝ ոսկեջրած արծաթ դրամներ լինելը։ Գաղտնի ոստիկանութեան հետապնդումով ձերբակալւել է յանցագործներից մէկը՝ Գ. Զարեկին և խոստովանել իր յանցանքը։ Պէտք է, որ հասարակութիւնը զգուշանայ «էժան գնով» այսպիսի «տաճկական» ոսկի գնելուց։

◆ Մեզ խնդրում են տպել, որ «Տորք» մարմնամարզական միութեան անդամները, կարեւոր փորձերի համար, այսօր, ժամը 4-ին պէտք է ներկայ լինեն որոշւած այրը։

◆ Յունիսի 16-ին Թիֆլիսում ընտացւել է 35 վագոն ալիւր, 1-ական վագոն շաքարաւազ, գարի և ցորեն, 4 վագոն շաքար, 5 վագոն նաւթ և 344 փ. լուցկի։

ԿՈՎԿԱՍ

Հաղորդում են, որ նահանգապետի կարգադրութեամբ Արմաւիրում երեք ամսով բանտարկւած է վաճառական միլլիոնատէր Տարասովը, որ թագցրել և գլացել է իր առեւտրական տնից սահմանւած սակագնով շաքարաւազ ծախելու, այն ժամանակ, երբ քաղաքը գտնւել է ծայրայեղ կարիքի մէջ։

◆ Կաշառակերութեան համար պաշտօնից արձակւած և բանտարկւած է Չերնոմորսկայա կայարանի կառավարիչը։

◆ Երեւանից հաղորդում են, որ այս տարի հացի լաւ բերք է սպասւում։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

„Кав. Сл.“-ին Մոսկւայից հեռագրում են. „Рус. Сл.“-ին Պետրոգրադից հեռախօսով հաղորդում են, որ մի նոր կարեւոր ակտ է հրատարակւելու Լեհաստանի ապագայ կազմակերպութեան մասին։ Այդ ակտով հանդիսաւորապէս պիտի հաստատւի Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչի յայտնի կոչը։ Նոր ակտի համաձայն Լեհաստանը հնարաւորութիւն պիտի ստանայ ազատ զարգացման, ընդարձակ ինքնավարութեան հիմունքների վրայ։

— Լոզաննում բացւած է հպատակ ազգութիւնների միջազգային խորհրդաժողով։ Ներկայ են 23 ազգութիւնների ներկայացուցիչներ։ Նախագահում է բելգիական պրոֆեսոր Օգլէ։

— „Рус. Инв.“-ը գերմանական մամուլից քաղած տեղեկութիւնների հիման վրայ հաղորդում է, որ Բեռլինի զինւորական շրջաններում անհրաժեշտ են համարում վերջ տալ գործողութիւններին Վերդենի մօտ և Հինդենբուրգին հնարաւորութիւն տալ յարձակման դիմելու ռուսական ճակատի հիւսիսային մասում։

— „Рус. Вѣд.“-ն հաղորդում է, որ վերջին օրերս գերմանացիները բաւական խոշոր աջողութիւն են ձեռք բերել Վերդենի մօտ, վերցնելով Տիօմոն մարտկոցը և Ֆլեորի մարտկոցի մի մասը, որով բաւական կրիտիքական դրութեան մէջ են դրել հարեան Սուվիլ մարտկոցը։ Սակայն գերմանացիները հազիւ թէ ռազմական օգուտներ ձեռք բերեն նոյն իսկ Վերդենի անկման դէպքում, որը ներկայումս կորցրել է իր նշանակութիւնը, որովհետեւ ֆրանսիացիները մի շարք նոր ամրութիւններ են շինել Վերդենից դէպի արեւմուտք, ուր գերմանացիները ստիպւած պիտի լինեն կրկնել Վերդենի երկար պատմութիւնը։

— „Рус. Сл.“-ի տւեալով, գերմանացիները Վերդենի տակ վարած 130 օրեայ կռիւների ժամանակ ծախսել են 10 միլլիոն ծանր հրանօթ և կորցրել են մօտ 400 հազար մարդ։

— „Рус. Сл.“-ին Սեւաստոպոլից հաղորդում են, որ վերջին օրերս թիւրքերը ծովամերձ շրջանում օգնական նոր զօրքեր ստանալով դիմել էին մի շարք յամառ յարձակումների, որոնք վերջացել են կատարեալ անաջողութեամբ։ Թիւրքերի կորուստները շատ մեծ են։ Ռուսաց զօրքերը շարունակում են առաջ անցնել։

— Աթէնքից հաղորդում են, որ Զայմիսի կաբինետը կատարեալ վստահութիւն է ներշնչում Վենիզելոսին։ Վերջինս յոյս ունի պարլամենտ մտնելու իբրեւ պատգամաւոր նոր ընտրութիւնների ժամանակ, որոնք տեղի են ունենալու յուլիսի վերջը։

— Համաձայնութեան պետութիւնները Զայմիսի կաբինետին ֆինանսական ընդարձակ օգնութիւն են խոստացել, որի մանրամասնութիւններն ու պայմանները սակայն, դեռ ևս չեն մշակւած։

— «Evening News»-ին հաղորդում են, որ Գերմանիայի և Աւստրիայի դեսպանները շուտով հեռանալու են Աթէնքից, որովհետեւ Յունաստանը նրանք այլ ևս անկախ պետութիւն չեն համարում։

— «Morn. Post»-ին Սալոնիկից հեռագրում են, որ նոյն օրը, երբ Յունաստանում փոխւած էր կաբինետը, յոյները Կոստանդին թագաւորի հրամանով Նէա Պետրա բերդը յանձնել էին բուլղարներին։ Հաստատւում է այն լուրը, որ յոյն-բուլղարական պայմանագիր է ստորագրւած յունական բերդը բուլղարներին յանձնելու մասին։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սալմաստ, 29 մայիսի

Խնդրեմ թոյլ տաք «Հորիզոնի» միջոցով խորին շնորհակալութիւն յայտնել մեծ. պ. Համբարձում Թումանեանին, որ իր հանգուցեալ հօր՝ մահտեսի Սիմոնի յիշատակը յաւերժացնելու համար նւիրել է Թաւրիզի Լիլաւայի դպրոցին 10,000 ռ., Բերդաթաղի դպրոցին 10,000 ռ., նոյնպէս Նպաստակի համար 20,000 ռ.։

Նաեւ Սալմաստի կոմիտէի կողմից խորին շնորհակալութիւն եմ յայտնում Լոնդոնի լորդ-մէրին, որ Թաւրիզի անգլ. հիւպատոսարանի միջոցով ուղարկել է հայ գաղթականների օգտին 10,000 ռ.։ Բացի սրանից ստացւած են Էջմիածնից 5,000 ռ., Թաւրիզի Հայուհեաց կոմիտէից 2,000 ռ., Թաւրիզի Հայուհեաց Բար. ընկերութիւնից Աղքատի վերաշինութեան համար 1000 ռ.։

Չեմ յիշատակում այն մեծ գումարները, որ բաշխում են պետական լիազօրը, Տառեանին կոմիտէն և Քաղաք. Միութիւնը հիւանդանոցի վրայ ծախսելով։

Ներսէս եպիսկոպոս

Խմբագիր՝ Ս. ՍԱՀԱԿԵԱՆ